

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական

Encyclopedie معجم علوم

ԽՐԱԳՐԱԳԵՏ-ՏՆՅՐԷՆ

Ղ. ԲՈՒԱՏ

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 16

1898 ՅՈՒՆԻՍ 20

Ամեն տեղի համար Տարեկան կանխիկ 50 դանեկան վեցամսեայ 26, իսկ եռամսեայ 13 դանեկան: Օտար երկրաց համար տարեկան կանխիկ 15 ֆրանկ: Թղթասարի ծախքը տեղագրութեան կը վերաբերի: Հասը 40 փարայ: Գաւառներէ բօսքի բուլ ալ կ'ընդունուի 100 դրուէի տեղ 105 դրուէ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ

0. ՓԱՓԱՋԵԱՆ. — Գիտական իմաստասիրական. — *Ինչո՞ւ կ'ինտերուս մէջ հանճար չէ ծնած:*
ԱԼԻՔ. — Խեղացի կիսն իր ամուսինն ալ խեղացի կ'ընէ:
Ղ. ԲՈՒԱՏ. — Առանձին կենդանաբանութիւն. — *Մժեղ:*
Մ. Կ. ՄԱԼԱԹԵԱՆ. — Օղբ եւ միտոպներ: — *Ահա կենդանի միջի:*
Ղ. ԲՈՒԱՏ. — Գաւառային կենդանաբանութիւն. — *Խըրդած զրիթ:*
Ղ. ԲՈՒԱՏ. — Հաւկիթք երկար ասեմ քարմ պանելու միջոց:
ԱՐԱՔՍ. Առանձին տեսական: — *Կանաչ ընկուզի միջ:* — *Կա-*
պերաներու բիծերը հանելու միջոց: — *Կածիծնեքը ան,* — *ցնելու միջոց:*
— *Թէ ինչպէս մաքրելու է սեւ գուլպաները առանց գոյնը փոխելու:*
3. ՀԱՃԵԱՆ. — Զուարճալիք:
Թղթակցութիւն: — Զբօսանք. — *Լուծում թիւ 7 հանելուկի:*
Թուաբանական առաջադիւթիւն մը:

Հատը 40 փարայ

Կ. ՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. Ճ. ԱՐԱՄԵԱՆ

Կ. Պոլիս, Մանմոս-փառ, Բիրքիս խան քիւ 26

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՔ

Կ. Պոլիս. — Ա. Վ. Գ. Ս. Կ. — Ստացանք
54 զրուշ Հարսանեաց նկարագրութեան առ-
թիւ:

Իզմիս. — Ա. Կ. — Ուզած նոր թեր-
թերնիդ յղեցինք նամակով մը:

Մալխարա. — Վ. Մ. Չ. — Հաճեցէք գան-
ձել բաժանորդագիրները: Սոյն խնդիրը կ'ը-
նենք՝ նաեւ բոլոր մեր գործակալներուն:

Ռոքոսո. — Յ. Տ. — Նամակ գրուեցաւ,
բաժնեգիրները գանձել հաճեցէք:

Պարսիզակ. — Վ. Ճիլունի — Ուզած
թերթերդ ամբողջ զրկեցինք. կ'սպասենք ձեր
նամակի:

Աստաղար. — Ս. Ս. — Մեր զրկած նա-
մակին պատասխանին կ'սպասենք:

ՁԲՈՍԱՆՔ

Լուծում թիւ 7 Հանելուկի

Կ—Դ—Ն—ԹԻՒՆ

Լուծեցին.

1. Յ. Շէլէֆեան. — 2. Յ. Գ. Տէր Յա-
կոբեան. — 3. — Կարապետ Ա. Փէհլիվան-
եան. — 4. Կարապետ Տուտաքեան. — 5.
Պողոս Բոլատեան. — 6. Ե. Յ. Լիթմէքճեան.
— 7. Յակոբ Արայճեան. — եւ Ատորազա-
րէն Ռուբէն Մ. Յ. Սարըեան, որ լուծած է
Յունիս 15ին:

Վերոյիշեալ հանելուկի լուծումը թէեւ ա-
ռաջին անգամ Յ. Շէլէֆեան էֆէնտի մեր
ձեռքը հասցուց. բայց գրեթէ կէս ժամ վեր-
ջը Յ. Գ. Տէր Յակոբեան 14 տարեկան պա-
տանին, որ տակաւին ուսանող մ'է Կեդր-
վարժարանի, հետեւեալ ոտանաւորով լու-
ծած եւ մեր ձեռքը հասուցած ըլլալուն,
խոստացուած նուէրն այդ պատանեկին տալ
արժան դատուեցաւ, նկատելով որ կէս ժա-
մուան մէջ չի գրուիր այդպիսի ոտանաւոր մը:

Սանատրեան վարժարանի աշակերտնե-
րէն Յ. Ուզունեան յղած է մեզ էրզրումէն
թիւ 4 հանելուկի լուծումը. եւ դիտողու-
թիւն կ'ընէ թէ, գաւառացիք իրենց հեռա-
ւորութեան պատճառաւ չեն կարող մասնա-
կից ըլլալ լուծողներուն:

Դիտողութիւնը արդարացի է, եւ թերթիս
վարչութեան կողմէ արգէն այդ կէտը նկա-
տողութեան առնուած ըլլալով. գաւառացի-
ներուն համար մասնաւոր տնօրինութիւն մը
ընել կը խորհի. բայց այս մասին եթէ իրենց
կողմանէ լու առաջարկ մ'ըլլայ, հաճութեամբ
պիտի ընդունուի:

* * *
Կենդանութիւն Եւ Ես բարի,
Չարածձի չեմ նման չարի.
Չունենալով նիւթ եւ հագի,
Ամենայն ինչ ինձմով ապրի:

Ձիս կը յիշեն երկրպագուք բաքսի,
Յորժամ օղին անոնք բերնէն վար հասի.
Ձիս կը սիրեն եւ տխրութեն ըրիւր մարդիկ,
Հոգ չէ լինի հարուստ եւ կամ աղքատիկ:

Իմ գրերը չորս (4) վանկ կազմեն,
Իսկ ինքնիշխանը Կ Դ. Ն. Լն,

464 եւ Ես հաշուով թըւի

Հաւատացէք սուտ չի թուի:

«Թիւն»ը այժմ ձեռք առնելով,

Յառաջ մղուի երեք իմաստով.

Կարծեմ լուծեցի Տէր-խմբագիր.

Նուէրը տալու մի՛ վարանիր:

3 Գ. ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆ

Պողտեան Տիգրան Էֆ. ի խնդրը. զոր
դրած էինք թիւ 15ին մէջ. տակաւին ան-
լուծելի մնացած է թէեւ շատ տեղերէ իբր
լուծում ընդունեցինք զրութիւններ, բայց
ամենն ալ սխալ են:

ԹՈՒԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹԻՒՆ ՄԸ

1. Մարդ մը համբիշ մ'ունէր, Յակոբ համ-
րեց 1 աւելցաւ, Յակոբ համրեց 2 աւելցաւ
7ակոբ համրեց 4 աւելցաւ. քանի՞ էր համ-
րիչին հատիկը: (Գիտնալով որ 100էն պա-
պաս էր):

Գործնական լուծում

3ակոբ համրեց աւելցաւ $1 \times 70 = 70$

5 " " " $2 \times 21 = 42$

7 " " " $4 \times 15 = 60$

172 | 105 = 67

Պատ. — Դանի որ 100էն պակաս էր՝ 67
հատ էր:

Այժմ պէտք է ըսել թէ ինչո՞ւ համար ա-
ւելցած 1ը 70ով, 2ը 21ով եւ 4ը 15ով բազ-
մապատկելով արտադրեալներուն գումարը
պատասխանէ է:

ՅՈՒՆԿԻԼ

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Գրական եւ Գիտական



Encyclopedie معجم علوم

Բ. ՇՐՋԱՆ

ԹԻԻ 16

1898 ՅՈՒՆԻՍ 20

ԳԻՏԱԿԱՆ—ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ

ԻՆՁՈՒ ԿԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ ՀԱՆՃԱՐ ԶԷ ԾՆԱԾ

Դաս մը մտածողներ կան, որոնք կը պնդեն թէ կրնա մտաւորական կարողութեան տկարութիւնը, որդիւնք է բնական աննպաստ պայմաններու, անձուկ եւ շարժազուրկ մթնոլորտի մը մէջ ապրելուն, մէկ խօսքով, միջավայրի ազդեցութեան կը վերագրեն:

Սակայն այս գիտողութիւնները կրնան րոն փոքրամասնութեանը կը պատկանին, քանզի անոր չեն, հետեւաբար բուն գիտական պատճառները չեն շօշափելու: Որովհետեւ Ներսիսեանի մէջ, թէ՛ առաջ եւ թէ՛ հիմա, կրնան ուսուցիչները նոյն գիտութիւնները ունին զարգանալու, կրնան ալ ներկայ կրնան գտնուիլ լատիններու, թատլոններու, անոնք ալ համալսարանական ընթացքներ ունին եւ սակայն գիտութեան ու գեղարուեստի այլ եւ այլ ճիւղերուն մէջ կրնան չեն ունեցած ստեղծող եւ հնարող հանճարի տէր եւ գիտնական դէմքեր: միշտ եւ ամեն տեղ այլեւն են մտաւորական, ինչպէս նաեւ

դոճնական աշխարհին մէջ բարձրագոյն տեղը գրաւողները:

Ի՞նչ է այս երեւոյթին ներքին պատճառները, բնախօսութեան եւ հոգեբանութեան նոր հիմնադէտերուն համեմատ:

Կենդանաբանութեան մէջ հաստատուած է թէ, ոչնայ որ անասուններուն արուին ուղեղային կամ մտաւորական դրութիւնը էզէն աւելի զարգացած է. նոյնպէս արուին գեղեցկագիտական կամ երաժշտական ոգին աւելի վեր եւ ուժով է էզէն. թռչուններու աշխարհին մէջ երաժշտութիւնը գլխաւորաբար արուին սեպհականութիւնն է. անոնք կը շինեն իրենց նուրբ եւ արուեստագիտական բոյնները: Կապիկներուն մէջ երաժշտական զգացումը արուին մէջ ունի մշակուած է:

Սոյն գիտողութիւնները մարդկային ցեղին ալ կը պատկանին:

Նախնական արուեստները անհատին գեղեցկացումը, անոր զէնքերուն, բնականաբան զարգը կը ցոլացնեն:

Այլն է որ, ինչպէս գիտենք, բնութեան մէջ ինչ որ գեղեցիկ կը տեսնէ, արտադրել կուզէ զայն. ան է որ իր թերութիւնը եւ դժուր փետուրներով կը զար-

դարձ, իր ականջները և ծոծրակը ապարաշաններով և օղերով կը հագուեցնէ:

Մինչդեռ կինը հազիւ երբեմն երբեմն կ'երեւայ տեսարանին վրայ անզարդ: Առնառարքեան տարբերութիւնը այս մասին մեծ դեր կը խաղայ: Երկրորդ և գլխիւ է առջինին չափ կարեւոր պատճառ մըն ալ, սա է թէ, կնոջ մէջ սիրասարքի ոգին (érotisme) և զգայութիւնը այրին չափ զարգացած չէ:

Կին մարդը ցտը և հաճոյքը էրկի մարդուն չափ չի զգար. ասոր համար է որ անոնց մէջ բանաստեղծներ, նկարիչներ կամ երաժշտական մեծ վարպետներ երեւցած չեն: Ինչու որ այդ արուեստներ խորունկ և լայն զգացման կը կարօտին, այդ կինը խորունկ չի զգար արտայայտելու համար: Կնոջ մոռաւորական տկարութեանը երրորդ և ամենէն էական պատճառը, անոր ծննդական զգայականութիւնը կամ ճշմարտ (organisme) պէտք ունի մեծ քանակութեամբ կենդանական ուժ սպառելու, որպէս զի իր սեռը մըշտատեւել տայ: Հետեւաբար ա՛լ կը պակասի անոր ջիւղերու և մկանունքներու ուժը, որուն կը պարտի այրը իր ֆիզիքական և հոգեկան գերակշռութիւնը:

Գնդարուեստի պատմութեան մէջ կը տեսնուի թէ, նկարիչները, երաժիշտները և գրական մեծ բանաստեղծները, իրենց գլուխ-գործոցները երիտասարդութեան կամ արբունքի տարիքնուն մէջ արագորած են: Կեանքի այն շրջանին երբ սեռական կեանքի զարգացումը իրեն հետ կը բերէ նաեւ բեղուն զրոգոս միներու հոսանք մը, որ բանաստեղծութեամբ կ'արտայայտուի. ասոր համար է որ երիտասարդ պատանիներուն մէջ աւելի մեծ թուով բանաստեղծական խառնուածքներ կան, քան թէ մանկա-

մարդ օրիորդներուն: Ուրեմն, ինչպէս յայտնի է, սեռն է քնարերգական, ինչպէս նաեւ ընդհանուր բանաստեղծութեան միակ սկզբնապատճառը:

Երաժշտութիւնը կամ նկարչութիւնը միթէ արդիւնք չեն ծննդական (génésique) զգայնութեանց, որ ուղեղային կարողութիւններուն կը խառնուին, պատկերներու և դաժափարներու զուգորդութեամբ մը:

Արդ, կնոջ քով այս տեսակ զգացումները եթէ բոլորովին չեն պակսիր, դէթ այրին ունեցածին չափ զարգացած չեն:

Հոգեբան-գիտուններու կողմէ հաւատարմած է թէ՛ կիներն ալ այրերուն պէս իրենց ամենէն հոյակապ և հանճարեղ արտադրութիւններին արբունքի տարիքնուն մէջ ցոյց առած են, սա տարբերութեամբ որ՝ անոնց այդ կարողութիւնները հետզհետէ մարած տկարացած են իրենց ամուսնութենէն ետքը:

Կիները ուրիշ նկարագրով մը դարձեալ ետ կը մնան սոյրերէն. և այդ նկարագրիւր խոջնդոս մը եղած է անոնց ստեղծելու, իմաստասիրելու կարողութեանց մէջ զարգանալու: Սա է թէ անոնք նմանող եղած են, հիւրին կապուած են. և շատ ուշ կ'ըմբռնեն ինչ որ այրերուն համար արդէն շատոնց ինկած է: Ներկային իրերը քննադատող, մաքառող հազուադէպ է գտնել անոնց մէջ: Գործնական կեանքի մէջ պահպանողական գտնուած են:

Նմանողութեան ոգին այնքան զարգացած և ծայրայեղութեան հասած է որ, ինքնատիպութեան ոգին փճացած, ջլատուած է:

Բնախօսական լեզուով, կնոջ ուղեղային գրութիւնը զգայարանական գրութեան շատ վար է:

Ասոր հակառակ, այն կիները որ իրօք

համեմատներուն դասը կրցած են մանեւ, անոնց հոգեբանութիւնը և ընտելութիւնը լայնորակի կը տարբերի սովորական առողջ կիներէն:

Հանճարի տէր կիներուն յով մտաւորական կարողութիւններուն չափազանց զրոգումէն կամ զարգացումէն առաջ եկած է սեռական խանգարումներ, ջլախտական անկարգութիւններ, անոնց խօսուածքին, շարժումներին, գիմնադժուրութեան մէջ առնական բան մը մտած է. գիրերնին իսկ այլափոխուած: Հիներէն Սածոն էրիկ մարդու գէմք ունեցած է. իսկ նորերէն ժօրժ Սանը էրիկ մարդու ձայն ունէր, և էրիկ մարդու հազուադէպ հագնել:

Օր. Պաշքիլոյէժ, կիներուն մէջ աշխարհիս ամենէն նշանաւոր արուեստագէտ նկարիչը մեծ վերնատ (épileptique) մըն էր. և բնաստութիւնը՝ կատաղի մարդու համապատկերը:

Բայց դարձեալ հին հանճարները չեն հասած գաղափարի, զգացումի այն բարձունքը, ուր կը հանդչին Շէքսպիր, Պայրըն, Կէօթէ, Անճէլօ, Նէվիսոն և ուրիշներ:

Ամենէն նշանաւորներուն ժօրժ-Սանի, Տ. Սթաէլի, Սածօի և Պաշքիլոյէժի քով ստեղծողի, հնարողի ոգին չէ որ կը աւրապեալ, հաւրա նուրբ գիտողութեանց արդէն յղացուած գաղափարները աւարածելու կարողութիւնն է որ մեծագոյն տեղը կը զբաւէ:

Կիներուն մէջ տաղանդներ աւելի գիւրիւն է դանեւ, ինչու որ ինքնապաշտօնագործութիւնը, — որ հանճարին գըլխաւոր նկարագիրը կը կազմէ — առկէ կը տեսնուի. Իրօք ալ շատ անգամ տաղանդի մէջ կիները գիւրադանցած են այլ ինքնուրու, ճաշակի, ձեւի, նուրբ ճարտարարուեստներու վերաբերող գործերու մէջ:

Կիները շատ աւելի ընդունակութիւն ցոյց տուած են. Թատերական արուեստին մէջ ալ կարելի էր դէմքեր ունեցած են, որոնց ներկայացուցիչը կրնայ համարուիլ, Սարա-Պէնար:

Ամփոփելով ըսենք թէ մայրականութեան պաշտօնին մէջ փնտռելու է կնոջ մատուցողական տիպարութիւնը. Բայց առիկա միթէ աւելի ընտելան և ճշմարիտ կոչումը չէ՞ կնոջ:

Պաշտօն մը որ անհուն զոհողութիւններ կը պահանջէ, թէ՛ ֆիզիքական, թէ՛ հոգեկան. Եւ չափաւոր պահանջի որ կինը կին ըլլալէ դող չի աշխարհ, բնութեան մէջ ինք ինչ գեր որ ստանձնած է, անմիայն կատարէ. բայց միւս կողմէ, չէի վախճալ որ անասնական վիճակով մը բոլորէր իր կեանքին օրերը, մտաւորական և ֆիզիքական ներգաշնակութեանց մէջ մնար. և մօր մը ճշմարիտ գերը Եստանձնէր. նոյնքան մեծ և գեղեցիկ, ուրբան հանճարին ունեցած փառքը:

Օրբագիւղ

Օ ՓԱՓԱՋԵԱՆ

ԽԵԼԱՑԻ ԿԻՆԸ ԻՒՐ ԱՄՈՒՍԻՆՆ ԱԼ ԽԵԼԱՑԻ ԿՐՆԷ

(Շար. եւ վերջ թիւ 13)

Ու նաև նստան անոնք, նաև մը որ հաւելայ կ'երթար ուր հասան ոգը և առողջ և շնորհիւ ելեք հարիւր դրու չին որ Մալօթ տուած էր անոնց, կրցան պղտիկ վաճառատուն մը բանալ շուկային մէջ:

Սանտ, այսպէս կը կոչուէր Ներինայի նոր ամուսինը, որ խիստ աշխատասէր, և դորժունեայ մարդ մ'էր, իւր ձախող բաղդը լաւ փորձառութիւն մը տուած էր անոր, և Ներինա ինչպէս գիտէր արդէն լաւ տանտիկին մը և խնայող էր, և այսպէս ամուսինը շահելով մէկ կողմ:

մանէ ու կինը խնայելով միւս կողմանէ, անո՞ք կրցան քիչ ժամանակուան մէջ, ամենէն բանուկ վաճառատուններէն մին ունենալ շուկային մէջ:

* * *

Եւ երբ տարի վերջը, օր մը երբ նեքի- նա վաճառատան ետեւի կողմը զբաղած էր ցոլեկուան ճաշը պատշաստելու, տե- սաւ որ ամուսինը մէկու մը հետ կը խօ- սակցէր՝ որուն ձայնը անձանօթ չէր ի- րեն. նեքինա հետաքրքրութենէ կամ տրիշ սեւէ տարբեր զգացումէ մղուած դուռը բացաւ դիտելու համար այս օ- տար մարդը, որ քիչ մը յետոյ իւր ա- մուսնոյն հետ մեկնեցաւ:

Նեքինա իւր իմացածներէն կրցաւ հե- տեցնել թէ՛ այս մարդը մեծ քանակու- թեամբ խահուէ ունենալով իւր ամուս- նոյն ծախել կուզէր:

Ամուսինը երբ վերադառնաւ, նեքինա անտարբերութեամբ հարցուց որ, կը ճանչնա՞ր այդ մարդը, որուն հետ դուրս ելած էր քիչ մ'առաջ:

— Ո՛հ, պատասխանեց ամուսինը, բայց այն մարդը ըսաւ, լաւ սուրճ մը ունի որ ծախել կուզէ:

— Այն ատեն, ըսաւ կինը, վաղը ճա- չի հրաւիրենք այդ մարդը, ու յետոյ ի- րեն կը հարցնես որ՝ թուղթ խաղալ զի- տէ՞ թէ ո՛չ, և դուն որ վստահ ես լաւ թուղթ խաղալուդ՝ պիտի կրնաս խաղը չահելով ամբողջ ապրանքը օտարականին ձեռքէն տանել:

Շատ լաւ, ըսաւ ամուսինը՝ արդէն քու խրատներուդ հետեւելով միշտ օգտուած եմ:

Հետեւեալ առաւոյն վաճառականը հրաւիրուեցաւ, և ընդունելով հրաւերը, որոշեալ ժամուն եկաւ:

Սուրճը չառ սքոնչելի գտան, քանի մը վարկեան վերջը Սանտ՝ որ առիթը

բնաւ չէր փախցնէր վաճառականին հաճոյ ըլլալու համար, իսկոյն քիչ մը հրամ- ցուց առաջնակարգ ծխախոտով լեցուն, եւ անտարբեր շեշտով մը՝

— Պիտի փափաքէի որ, ըսաւ Սանտ, կարենայի ոեւէ բանով ձեզ զբօսցնել:

Օ՛հ, ասիկայ չառ դժուար է, ըսաւ Մաչօթ, ախուր հառաչով մը:

— Օրինակի համար ոեւէ խաղ մը:

— Բայց, ըսաւ Մաչօթ, չի՞ դիտեր թէ խաղակիցս ինչ համարձակութեամբ, յանդգնութիւն կ'ունենայ ինձ հետ թուղթ խաղալու, ես որ այդ մասին մեծ փորձառութիւն ունենալ կը կարծեմ:

Բայց պէտք է դիտնալ թէ, ըսաւ Սանտ, ես եւս կրնամ պարծենալ իբր համբաւաւ որ խաղացող, և քիչեր միայն կը ճանչնամ որ ինձ հետ խաղակցելու քաջութիւնը ունեցած են, իսկ Մաչօթ գթօտ ակնարկ մը նետելով բարեկամին վրայ, նշանայի կերպով հասկցուց թէ՛ իր խօսքեր չեն վախցնէր զինքը:

— Ո՛հ, չառ առաջ կ'երթաք սակայն, ըսաւ Սանտ չի կրնալով զարմանքը զըս- պել:

— Ո՛չ, ո՛չ, ըսաւ Մաչօթ, պէտք է լաւ դաս մը առնել իմ փորձառութենէս:

— Կամ պէտք է որ ես ձեզի լաւ դաս մը տամ:

Ծառաններէն մին անմիջապէս թղթա- խաղի սեղանը պատրաստեց, և միցա- կիցները դէմ առ դէմ անցան:

Եւ անմիջապէս կատաղի մարտ մը սկսաւ երկու մրցակիցներուն մէջ, որոնց սակայն ծայրահեղ անտարբերութեան տակ ծածկուած էր իրարու նկատմամբ ատելութեամբ խառն բարկութիւն մը, զիրար յաղթելու համար, Մաչօթ նախ ուզեց խաղին ընթացքը իր վիճակին ձե- դելով, վերջին ձեռքին անակնկալ հար- ուած մը տալ ընկերոջը, բայց այն վար-

կեանքին երբ Մաշօթ լարուած հեռա-
տեսութեամբ մը խաղը վաստկելու վրայ
էր, Սանտ փորձառու ճարպիկութեամբ
ջուրը ձգեց մրցակիցին վարպետութիւնը:

— Կորսնցուցի, ըստ Մաշօթ մեծ
հանդարտութեամբ, խեղդեւ ջանալով
իւր յուսախաբութիւնը:

— Խոստովանեցէք որ, ըստ Սանտ,
գեղեցիկ միջոցի գիմեցի օգը հանելու
համար ձեր փորձը:

— Չարածճի՛, այդ հաշիւը անպատ-
ճառ համբաւաւոր խաղացողէ մը դող-
ցած էք:

— Չէ՛, բնաւ, ըստ Սանտ, այդ հա-
շիւը ծախու առած կնոջմէս ստրկած եմ:
Մաշօթ հաղիւ կրցաւ ախուր հառաչ
մը խեղդեւ կուրծքին մէջ, և ոտքի ե-
լաւ:

— Բայց ո՛ւր է որոշեալ փոխարժէքը:

— Վաղը պիտի կարգադրենք, ըստ
Մաշօթ:

* * *

Հետեւեալ օրը՝ երբ Սանտ օտարակա-
նին կ'սպասէր, կինը զինքը կանչեց:

— Ձի պիտի մոռնաք ձեզ առած դասս,
ըստ կինը:

— Պէտք չէ՛ որ կտակած ունենաք այդ
մասին, ըստ Սանտ, շատ լաւ յիշողու-
թիւն ունիմ:

— Յետոյ վաղն ալ պէտք է ճաշի վար
դնել, որով երկու թաղթի եւս կրնաս
վաստկիլ, այնպէս չէ՞:

— Ճիշդ ձեզի պէս կը խորհիմ, պաշ-
տելիս նեքինա, խելացութիւնն է որ կը
հոսի ձեր բերնէն:

Նեքինա օտարականին ոտքին ձայնը
առնելով, չի տեսնուելու համար անմի-
ջապէս հեռացաւ, Սանտ բարեւեց մըր-
ցակիցը:

— Կը ցաւիմ որ, ըստ Սանտ, չի կրցի
զձեզ այսօր ճաշի հրաւիրել, բայց յու-

սամ թէ այդ պատիւը վաղը պիտի ը-
նէք:

Վաճառականը ընդունեց առաջարկը,
և ծառաները առաջնակարգ ծխախոտէն
մէյմէկ հատ հրամայեցով, խաղին սեղա-
նը նորէն մէջտեղ դրուեցաւ:

Խաղը սկսաւ. ու ամենախոր լռու-
թիւն մը տիրեց, իրարու երես ան-
գամ չէին նայեր, և ո՛չ բառ մը կը փո-
խանակէին. միայն թուղթերուն չոր ձայնն
էր որ կ'ելլէր, անշունչ տնկենդան կար-
ծեա մէյմէկ մեքենաներ էին (տկանջնին
խօսի Մադրի-Գիւզ հաճի Միխայիլի դա-
ղինօն, առտուրնէ մինչեւ իրիկուն թուղթ
խաղացող մեր բարեկամներուն, անոնց
հողին հողի չէ՞):

Օտարականը սկսած էր ալ կթուիլ,
իր ըրած փորձերը, հաշուառած վարպե-
տութեամբ կը ջանալու էին, պահ մը
կը կարծէր թէ՛ ալ խաղը շահած է, ու
կ'սկսէր քաշրչաւքներ տեղացնել Սանտի
դիմուն, որ սակայն մրցակիցն գեղեցիկ
հաղուած մը տալու համար ամեն միջոց
ի դուրձ կը դնէր. յետոյ բացազանչու-
թիւն մը արձակելով, խաղը շահած ըլ-
լալը կ'իմացնէր. Մաշօթ, նախ կը դիտէր,
աչքերը կը բանար, կը դողէր, տկանները
կը սեղմեր, շահեցաք, կրկին շահեցաք
կը կ'իմար, ախուր շեշտով մը:

— Բայց, ըստ, առանց իսկ ամենա-
պզտիկ բարկութիւն մը ցուցնելու. ուս-
կից ստրկեցաք այդքան ճարպիկ հակա-
հարուածներ, որոնք ես միայն գիտէի:

— Ծախու առած կնոջմէս, ըստ
Սանտ... բայց ի՞նչ պիտի ըլլայ մեր խա-
ղերուն փոխարժէքը:

— Ուրիշ առիւն, ըստ Մաշօթ:

— Վաղը կ'սպասեմ ձեզի, այնպէս չէ՞,
ըստ Սանտ:

— Անտարակոյս, ըստ Մաշօթ ու
բաժնուեցաւ:

* * *

Որոշեալ ժաման ճաշը պատրաստուած էր. օտարականը եկաւ :

Սեղանին զարդը, պնակներուն, պատառաքողներուն ու անձեռոցներուն կարգադրութիւնը օտարականին ականբեւ յուզումը տալին, որ սակայն չի կրցաւ ծածկիլ Սանտի աչիւրէն :

Ճաշի միջոցին ծառաներէն մին, սեղանին վրայ դրաւ պնակ մը սքանչելի քիչաւ, որ Մաչօթ այնքան կը սիրէր. Մաչօթ դուրսը դարձուց տեսներու համար պնակը բերող կինը :

Ծերունի Սեւամարթ մ'էր, բայց Մաչօթ չի կրցաւ զարմանքի բացադանչութիւն մը զսպել :

— Ասկէց ալ հիւսնեցէք, ըսաւ Սանտ, և ըսէք ինչպէ՞ս կը դաժէք :

— Հիւսնալի, ըսաւ Մաչօթ սրբելով արաւանունքին վրայէն արցունքի կաթիլները :

— Բայց կարծեմ թէ կուտք, ըսաւ Սանտ. արդեօք այս պնակը տխուր յիշատակ մը կարթնցնէ ձեր մէջ :

Ընդհակառակը, ըսաւ օտարականը ալ աւելի յուզուելով, այդ պնակը իմ հին կինս յիշեցնել կուտայ, որ կտրուցուցած եմ :

— Բարի և խելացի կին մը ճշմարիտ դանձ մ'է ամուսնոյ մը համար, ըսաւ Սանտ :

— Մհ, հիմայ այդ բանը կ'զգամ :

Սանտ շարունակեց. « Ինչպէս կը տեսնէք, ես հիմա երկրորդ կնոջս հետ եմ, առջինը կործանարար, մեծածախ էր, և ես այնքան խելացի չըլլալով տեսներու համար վիհ մը որ կը բացուէր առջեւս, և որ զիս հոն կառաջնորդէր. առտու մը երբ արթնցայ, ինքզինքս կործանած, լմնցած ու փճացած դուռայ, ձեռքի զինքը որ հեռանայ տունէս, անկէց ի վեր ալ բնաւ իր վրայ տեղեկութիւն առած

չեմ, ու անկից յետոյ երկրորդ մը տալի, տալիկայ իւր կարգապահութեամբ, իւր էքզոսիկով, իւր պատուաւոր վարքով իմ տունս բերաւ երջանկութիւն ու կարգ և կանոն հաստատեց հոն, ևս դրեթէ անկեալ վիճակիս մէջ անհաշիւ խնդ մը եղած էի. բայց իւր խելացի խօսքերով զիս երջանկացուց :

« Խելացի կինը իւր ամուսինն ալ խելացի կ'ընէ » ըսաւ ճայն մը :

Երեսը ծածկուած կին մը օտարականին մօտը կայնած էր :

— Ներինա, Նեյինա, կաղաչեմ, կը պաղատիմ, ներէ, ներէ՛ ինձի. հեծկըլտած Մաչօթ ամենաբուռն յուզման ու յնցման մէջ :

— Սյս օտարականը Մաչօթն է, ըսաւ Նեքինա, երեսը բանալով, ու ամուսնոյն զառնալով, ձեր բարեբալն է, և միշտ իմ աէրս է, ըսաւ Մաչօթի սարը խնալով :

— Սանտ, Սանտ, կաղաչեմ, ինձ վերադարձուր, ըսաւ Մաչօթ, իմ կինս, որչա՞փ վճարեմ այս անգամ :

Սանտ, Մաչօթը դիտեց անգամ մը, որ դրեթէ անճանաչելի եղած էր. վիշտը զրեթէ իւր դէմքի արտայայտութիւնը, ու զծերը ջնջած էր, յետոյ Սանտ անգամ մ'ալ Նեքինան դիտելով որ զաւկահար, զողջօջուն և յուզեալ էր խեղճ կինը, կարծես կեանքի կամ մահուան կ'ապուէր. Սանտ աչերը դէպ ի դեռինք խոնարհեցուց, և պահ մը մտածելէն վերջ, առանց վեր բարձրացնելու, ըսաւ.

— Նեքինա, կրկին թո՛ղ ձերը բլբլայ :

Ու սեղանէն ելլելով՝ ձեռք ու այլ ու կին առանձին մնան :

— Հիմա միայն տղատ կերպով պիտի կրնաս կրկնել քու հին բանաձեռքդ սղտակիս Նեքինա, ըսաւ Մաչօթ սեղմելով իւր կինը բազուկներուն մէջ :

— Ո՛հ, չէ, չէ՛, սակայն, կրկնեց նե-
րինա. կեանքէս սասը տարիներ պակ-
սեցուց ալ չի պիտի կրկնեմ այդ բանա-
ձեւը:

Թարգմ. Գաղիերեհե

ԱԼԻՔ

ԱՌՏՆԻՆ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

ՄԺԵՂ (սիւրիսիսեհե)

(Պատասխան քիւ 14 հարցման)

ՄԺԵՂԵՐԸ կը պատկանին Կենդանաբանու-
թեան երկթեւեան միջատներու կարգին: Եր-
կայն, սրածայր եւ պողպատի պէս կարծր
կնճիթ մ'ունին, որով մարդոց եւ անասնոց
մարմը զիւրութեամբ ծակելով արիւնը կը
ծծեն: Իրենց բողկուկները (ճակտին վրայ
գտնուած զոյգ մը բարակ եւ երկայն եղ-
ջիւրի պէս մազերը) թելաձեւ, քիստաւոր
(փուշիւղ) կամ սմանցն համրիչաշար, մին-
չեւ 66 յօդուածէ բաղկացած կ'ըլլան: Գլու-
խը կ'ւրժքին միացած է խիստ բարակ կո-
թունով մը, որ զիւրութիւն կուտայ կեն-
դանին ըստ հաճոյս գլուխը աջ ու ձախ շար-
ժելու: Յետոյ ոտքերուն տակը տեսակի մը
կծիկ կը գտնուի, օգտօգործով վերջացած,
որով ամենէն ողորկ առարկաներու վրայ ան-
գամ կրնան քաշել:

Յորեկը զով եւ շուք տեղեր կը քաշուին,
եւ երկայնին անհամար թուով գումարտակ-
ներ կազմելով օդին մէջ կը վժվժան: Երբեմն
տաք երկիրներու մէջ այնչափ բազմաթիւ
կ'ըլլան որ, գտնուած տեղերին լոյսը կը
խախտեն, եւ իրենց վժըլտութիւն ձայնը մին-
չեւ 1 ժամ հեռուէն կ'ըստի: Իրենց ապ-
րած տեղերուն մօտ եթէ բնակարաններ գըտ-
նուին, եւ եթէ ժամանակին պատուհանները
գոցուած չ'ըլլան, ներս կը մտնեն եւ այն ա-
տեն իրենց շահատակութեանց կ'սկսին: Ընդ-
հանրապէս պատերուն վրայ, վարագոյրնե-
րուն երկայնքը, եւ ուրիշ աչքի չի զարկած
տեղեր կը կառչին, ուր կ'գրաւին իրենց թա-
թիկներով բողկուկներն, գլուխին կամ
կնճիթին մաքրելու, եւ մութը սկսելուն,
մոռաւանդ երբ պատկիք, կը յարձակին

վրանիդ, եւ իրենց կնճիթով մորթերնուդ
ամենէն փափուկ տեղերէն արիւննիդ կը ծը-
ծեն: Աւելի կը նախընտրեն իգական սեռը
եւ պզտիկ տղաքները, որոնց մարմինը փո-
փուկ ըլլալով, առանց դժուարութեան կըն-
ճիթին մարմէն ներս կրնան մտնել. եւ ա-
ռաւօտուն կը տեսնէք ձեր մարմնոյն վրայ
տեղ տեղ փոքրիկ այտուցներ կարմրագոյն,
որ մարմնաջում մը յառաջ բերելով, կը պար-
տաւորիք շարունակ քերել: Ասոր պատճա-
ռը, կնճիթը մարմնոյն մէջ խոթած առեն
բարակ լարձունք մը (քուֆ) կը հասնցնէ, որ
թունաւոր է, եթէ այդ միջոցին ցաւին չի
զիմանալով չարաճճին վռնակ ուզէք. եւ ե-
թէ յանկարծ դարնելով ստոկեցնէք (կնճիթը
մարմին մէջ եղած պահուն), աւելի առա-
տօրէն կը հասնցնէ լարձունքը, որով արիւնը
բորբոքելով. խոշորիցք ուռեցք մը կը կազմէ:
Ասոնք ամենը գիտէք թերեւս, բայց զիտէ՞ք
նաեւ որ, այդ չարաճճի ստտանաները իգա-
կան սեռին կը վերարբերին. այսինքն՝ էդ մը-
ժեղներն են որ կենդանեաց արիւնով կ'ապ-
րին, մինչդեռ արունները կ'ապրին բոյսերու
եւ ծաղիկներու հիւթերով:

Յորեկները անգամ երբ զով տեղ մը կամ
առնակի մէջ ուզէք պզտիկ մրափ մը առնել,
կուգան խկոյն ձեզ անհանգիստ ընել, առի-
թէն օգտուելով:

ՄԺԵՂԵՐԸ կը գտնուին առհասարակ մնա-
յուն ջուրերու բոլորտիքը, իրենց կեանքի ա-
ռաջին չրջանը այդ ջուրերու մէջ անցնելուն
համար: Պատահած չէ՞ք երբեք, լինելու,
աւազաններու կամ դաշտերը տեղ տեղ գըտ-
նուած ջրակայաններու եւ ճահիճներու մէջ,
մինչեւ խկ — եթէ ունիք — ձեր տանը մէջ
ջուրի տակաւներու կամ կարասներու երես-
ները, կիսով չափ թափանցիկ, փայլուն կա-
նաչագոյն բարակ թրթուրի նման միջատնե-
րու, որոնք խոշոր գլուխ մը կունենան, եւ
օղակաձեւ մարմին մը. անշարժ կը կենան
ջուրին երեսը, եւ երբ մօտենաք իրենց, կամ
ջուրը շարժէք, այն տեսն խկոյն գլխիվար
ջուրին մէջ կ'ընկղմին: Անոնք մժեղներու
թրթուրներն են:

Էգերը իրենց ճուածութեան ժամանակ,
ջուրերուն երեսը ծածանող մանր առարկա-
ներու կառչելով, որովայնին դէպի ջուրը
կ'երկարեն, ետեւի ոտքերնին կը տարածեն

և և խաչածեղերով անկումն մը կը կազմեն, որուն բացումը մէջէն հետզհետէ կը սաահեցեն իրենց հակիրթները իրարու կպչած. որոնց մէկ ծայրը կըր, իսկ միւսը սուր կըլայ: Իւրաքանչիւր էգ 300ի չափ հակիրթ կ'ածէ, որոնք իրարու վրայ կ'ծկուելով փոքրիկ գնդակ մը կը կազմեն: Երեք չորս օրէն հակիրթները կը ճաթին, և անոնց մէջէն հարցական (?) նշանի ձեւով մանր թրթուրներ երեւան կուգան: Մինչեւ 20—25 օր 4 անգամ խորխարուծի (մորթելուն փոխել) կ'ենթարկին և այդ միջոցին վերը յիշուած կանաչ փայլուն թրթուրի ձեւը կ'առնուն: Զօրօրադ շրջանէն վերջ կ'ծիծի կը փոխուն, որուն մորթը կուրծքին երկայնութեանը պատուելով, կատարեալ միջուրը (մէկը) դուրս կ'ելլայ. նախ գլուխը, ապա մարմինը: Այդ միջոցին ետեւի ոտքերով ջուրին վրայ կը կանգնի, թեւերը կը չորցնէ և կ'սկսի թռչել:

Տեղեր կան, ուր այս միջատները այն աստիճան բազմութիւ կ'ըլլան, որ բնակութիւնը ոչ միայն դժուար, այլ մինչեւ իսկ անկարելի կ'ընեն: Այս պարագաներուն մէջ ճամբիւ փորձանք մը կը դառնան անոնք: Ահաւասիկ զանազան ոչնչացնելու համար յանձնարարուած միջոցները:

Մթեղվանը (նիպիւնի) ամենուր ծանօթ է, որ անկողնոյն շուրջը բուրելով, մեղները ներս մտնելու կ'արգիլէ. բայց եթէ ցորենը անգգուշ թեւամբ բաց թողած ըլլաք, անոնք ներս մտնելով կը սահաւորուն և կրկին ձեռք անհանդիստ կ'ընեն: Գիշերը պառկած սենեակինդ լապտեր մը վառեցէք, որուն ապակիներուն վրայ կայուն նիւթ մը, զոր օրինակ, մեղս, շաքարի չորուստ, կամ անուշեղէն մը կը քսէք, մեղները լապտերին ըյսէն փորձուելով, կը դիմեն դէպ ի հոն, և ապակիէն ներս անցնելու դիտումով կը մօտանան և կը փակչին: Անգլիական թերթ մը կ'ըսէ թէ տղիներն (պիյսկենսի, ricin ուրկէ հիւս եւադի կը հանեն) մեղները և ճանճերը սատկեցնելու մասնաւոր յատկութիւն մ'ունի, ուստի պառկած սենեակնուդ մէջ կրնաք դնել թաղարի մէջ տնկուած տղիներն մը, որուն հասէն մօզուկ և ճանճ փորձուելով, կը թառին անոր տերեւներուն վրայ, որ իսկոյն կը շտեթահարէ: Փորձելը դժուար

է. Բայց երբ աւազաններու, ջրակոյտներու մօտ է բնակութիւնելդ. որոնց մէջ բազմութիւ մեղներ յառաջ կուգան. այն ատեն ամենէն զիւրին միջոցը մերթ ընդ մերթ անոնց երեսը (10—15 օրը անգամ մը), տարածութեան համեմատ, փոփոխակի կիր (իրեմ) և ծծումբի (ֆիւլուր) փոշի թափելն է, որով հոն գտնուած թրթուրները սմբուլովին կ'ոչնչանան: Այս գործողութիւնը ընելու է ամեն անգամ որ, ջուրին երեսը այդ թրթուրներէն կը տեսնաք:

Ղ. ԲՈԼՍ

ՕՂԸ ԵՒ ՄԻՔՐՈՊՈՆԵՐԸ

ԱՆԿԵՆԴԱՆ ՓՈՇԻ

(Poussière inerte)

Ո՞վ չէ տեսած զոչ սենեակի մը փեղկին վրայ դանուող սեւէ ծակէ կամ ճեղքէ մը ներս մտնող արեւու ճառագայթ մը որ իւր անցքին վրայ կը լուսաւորէ հազարաւոր... միլիոնաւոր մասնիկներ: Այս փոշիները որոնք վեր կ'ենեն վար կ'իջնան, օդին մէջ ամեն վարկեան կը շարժին, աստին անդին կը տատանին, եթէ մանրադիտակով մը դիտուին, հոն կը տեսնուին անձեւ կամ բլբլեղաձեւ, թափանցիկ կամ անթափանցիկ տեսակ տեսակ մետաղներու մասնիկներ. ընդհանրապէս ասոնք վանակնի (cristal de roche, ածախի (charbon), կայծքարի (silex), կրային ծծմբատի ($SO^3.ca$), կրային բլնածխատի ($CO^2.ca$), կրային լուսածնատի ($Pho^4.ca$) մթէօրական երկաթի... փոշիներ են:

Ասոնց քով պէտք է յիշել տեսակ տեսակ մեղած կենդանիներու և բոյսերու միաջուրներ, որոնց մէջ շատ դիւրութեամբ մանրադիտակով կարելի է ճանչնալ վերնամաշկային բջիջներ (cellules épithéliales), թրթուրիկներու թեւերուն վրայ գտնուող փոշիներ (ecailles de papillon), միջատներու բազկակներ (antennes) և ոտքեր (pattes), աղբալիւսուր (duvet), բուրդ, մազի կտորներ, բամբակի թելեր, ջրածններու (infusoire) տեսակներ, ցորենի, վարսակի, դարի, գետնափնձորի նշայի (amidon=նիշաս

տէ) հատիկներ, եւայլն, եւայլն: Մթնոլորտին մէջ գտնուող անկենդան նիւթերու պէսպիսութիւնը սերտ կապ ունի միեւնոյն տեղւոյն մէջ գտնուող առարկաներու հետ. օրինակի համար բնականօրէնքներու մթնոլորտին մէջ կը գտնուի բուրդի, բամպակի թելեր: Քաղաքներու մթնոլորտին մէջ ալ կը գտնուի հիւսելի նիւթերու թելեր, եւ կըրնայ զանազանօրէն դաշտային մթնոլորտէն, որ այդ թելերը բաղադրին կը պահպան, բայց առատ կերպով կը գտնուին հողի հազարաւոր մասնիկներ, բուսային վերնամաշկային բջիջներ (cellules épidermiques), կեղեւնե-րու մասնիկներ, եւայլն:

Պ. Թխանտիէ ֆրանսական Լա Նաթիւռ գիտական հանդէսին Տնօրէն-Խմբագիրը Բարիզի օդին մէջ փորձեր կատարած է եւ գտած է որ 1 խորանարդ մետր օդ կը պարունակէ ընդհանրապէս 8 հազարերորդ կաւ՝ փոշի-ներ:

Մոզէլ կ'ըսէ թէ անձրեւէ մը վերջ՝ այդ փոշիներու քանակութիւնը այնքան կը նուազի՝ որ անոնց ամենաջնջին ծանրութիւնը ունենալու համար զգայուն կշիռներ մեզ կը պակսին:

Եթէ օդին մէջ գտնուող փոշիներէն քիչ մը ժողուել ուզէք, ամենէն պարզ միջոցը կը կայանայ օդին հանդէպ դնել կաշուն (visqueux) հեղուկով ծածկուած աստիկի շերտ մը. բայց հովը օտար մարմիններ եւս կրնայ բերել ապակիին վրայ, որով եթէ ըրածնիդ փորձ մ'է, իրականութենէն հեռու պիտի մնայ. ասոր համար ուրիշ գործիքներ հնարուած են, որոնց ամենէն պարզը giro-rouetteի մը ձեւը ունի. ասոր մէջ դարձեալ միեւնոյն կաշուն հեղուկով ծածկուած ասպակի մը կը գտնուի. այս գործիքին անունն է aëroscope:

Այս անկենդան փոշիները ամէն վարկեան մեր թոքերուն մէջ կ'անցնին շնչառութեամբ եւ արտաշնչումով դարձեալ դուրս կ'ելնեն: Ասոնք մեր գործարաններուն վրայ դէշ հետեւանքներ չեն կարող բերել, որով այսչափ խօսք բաւական է օդին անկենդան մասնիկ-ներուն վրայ:

ՄԹՆՈԼՈՐՏԻՆ ԳՈՐԾԱՐԱՆԱԻՐԸ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Մթնոլորտին անկենդան փոշիներուն եւ

գործարանաւոր մարմիններու միացորդնե-րուն քով մանրադիտակը մեզ կը ցուցնէ նա-եւ տարբեր գործարանաւոր մարմիններ. օ-րինակի համար ջրածնիներու հաւկիթներ (infusoires), փոշի (pollens) կոչուած ընդ-հանրապէս դեղին փոշին, գաղտասեւներու սփորներ (spores cryptogamiques), ցու-պիկներու սերմեր (germes de bactéries), եւայլն, եւայլն:

Օդին մէջ ջրածնիներու հաւկիթներու ներ-կայութիւնը ցուցնելու համար բաւական է առնել աման մը ջուր, որուն մէջ կը դնէք կանաչ բոյսերու կտորներ, ամանը կէս ժա-մու չափ 150° տաքութեան տակ կ'եռացնէք որպէս զի եթէ գործարանաւոր սերմեր զըռ-նուին բաւարարին ջնջուին. լաւ մը պահելէն վերջ վրան կ'աւելցնէք քիչ մը անձրեւի ջուր, եւ քանի մը օր վերջ՝ երբ մանրադի-տակով դիտելու ըլլաք, ջուրին մէջ պիտի գտնաք հազարաւոր մանրածնիներ (mona- des), ամիպներ (amibes), ձողկանաւոր ճը-ճիներ (Flagellés), արդիւնաւոր ճնիներ (ciliés), եւայլն, եւայլն:

Բեղմնափոշին (փոլէն) յառաջ կապայ յայտատեւներու սեռային արական գործա-րանէն (étamine=տէշ), բեղմնափոշին ան-կարող է ինքնիրեն աճիլ, այլ կը ծառայէ ձուարանին (ovaire) մէջ գտնուած ձուիկը (ovule) բեղմնաւորելու կազմելու համար հոռնեմ:

Բեղմնափոշին ունի տարբեր տարբեր գոյ-ներ եւ ձեւեր. կան որ կլոր են, ուրիշներ հաւկիթաձեւ, եռանկիւնաձեւ, բուրգաձեւ, եւայլն. ընդհանրապէս ասոնց գոյնը դեղին է, կան նաեւ կանաչագոյն կամ մոխրագոյն բեղմնափոշիներ: Ամրան եւ դարման մէջ օ-դը կը պարունակէ մեծ թւով բեղմնափոշիի հատիկներ. Բարիզի մէջ հաշուուած է որ այս երկու եղանակներուն մէջ ասոնց թիւը մէկ խորհ. մետր օդի մէջ մինչեւ 10,000-ի կը հասնի. այս թիւը երթալով կը տկարա-նայ որչափ որ աշնան մօտենանք, եւ ջնջին քանակութեան մը կը հասնի ձմեռը:

Օդին մէջ ասոնցմէ ուրիշ կը գտնուին սուռ-կերու սփորներ եւ փոքրիկ լոսերու (algues) սերմեր. այս վերջինները, որոնք տեսակ տե-սակ հիւանդութիւններ կամ մարմիններու փոխութիւններ յառաջ կը բերեն, կը կոչ-

ուին միփրուպ (mierbe=մանրէ)։

Սուռնկերու սփորները ունին տարբեր տարրեր ձևեր. Ունէ սփոր մը եթէ լուս պայմանի մէջ տրուած ըլլայ (տաքութիւն եւ խոնավութիւն) կը ծլի, սփորին մէկ կամ մի քանի կողմերէն բարակ թելեր յառաջ կուգան, որոնք երթալով կը բազմանան եւ հիւսուած կերպասի մը ձևը կ'առնուն, եւ կը կազմեն ինչ որ զիտական ըզուով կը կոչենք մսկասեր (myceliums). սնկասերը (միսէլիումը) յայտնաբերուած քոյսերու (phanerogame) արմատ կոչուած գործարանին կը համապատասխանէ, իր թելերը (filements mycelieux) բաւական աճելէ վերջ, կ'ուռին, փոքրիկ գնդակներու ձևով կը բաժնուին եւ կը կազմեն ինչ որ կը կոչենք սփորներ։ Այս սփորներն են որ մեր մշակած կարգ մը բոյսերու վրայ աճելով յառաջ կը բերեն հիւսուողութիւններ, որք բերքը կ'ոչնչացնեն մէկ երկու տարուան մէջ. այժմ գահանաճք միայն այս սուռնկերու անուաները տալ։

Urédo կոչուած սփորները արմտիքներու ժանգ (rouille) կոչուած հիւսուողութիւնը յառաջ կը բերեն։

Գետնախնձորն ալ տեսակ մը սնկային հիւսուողութիւն ունի որ յառաջ կուգայ péronospora infestausti սփորներու աճումէն։

Այդի միլոփու կոչուած հիւսուողութիւնը որուն վրայ այս տարի շատ խոտուեցաւ եւ գրուեցաւ, յառաջ կուգայ péronospora viticolaի սփորներէ։

Այդին ենթակայ է նաեւ ուրիշ սնկային հիւսուողութեան մը՝ որքաճաղիկին որ յառաջ կուգայ oïdiom Tuckerի սփորներէն։

Եթէ կտոր մը հաց կամ լիմոն խոնաւ տեղ մը ձգենք, քիչ ժամանակէն վէճ կը միջոյն, այսինքն մազանման թելերով կը ծածկուի. այս թելերը յառաջ կուգան aspergillus nigerի սփորներէն։

Բէսպին կոչուած հիւսուողութիւնը յառաջ կուգայ սունկի մը շերամի վրայ ապրելէն։

Կան նաեւ ուրիշ կարգ մը սուռնկեր, որոնք խմորում յառաջ բերելու համար օգտուած խմորաստանի կը կոչուին։

Օրինակի համար հացի խմորումին սուռնկ (saccharomyces minore) նշան չաքարի կը կը վերածէ։

Խաղողին խմորաստանի (saccharomyces

ellipsoïdes) խաղողին քաղցրանիթը ալ քոլի եւ բնածխային թթուի կը վերածէ։

Քացախին պասիլը (bacillus aceti) գինիին ալբոլը քացախային թթուի կը վերածէ, եւայլն։

Այժմ մեզ կը մնայ խօսիլ միջրոպներու վրայ, ինչ որ սիրտի ընկնք յառաջիկայ յօդուածնու մէջ։

Մ. Կ. ՄԱԼԱՔԵԱՆ

ԴԱՇՏԱՅԻՆ ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Խլրդաւորիք (սանա պուրնու)

Ծղրթներու ցիլակից այս միջատը թխագոյն եւ երկայնաձիգ մարմին մը ունի։ Գլխուն առաջակողմը երկայն՝ բայց մարմինն կարճ զոյգ մը բողբոջներ կցուած, իրանը (պիսկն) ուռուցիկ կրկայի (բոգպաղը) մը պատեանին պէս, բաւական կարծրիկ է, կարճ թելեր եւ մեծկակ երկայն որովայն մ'ունի, որ կը վերջանայ զոյգ մը խայթոցաձեւ պոչերով։ Գլխուն մօտ զոյգ մը թաթեր ունի, կարճ, ուժեղ եւ վերջաւորած մատնոձեւ ափով, որոնցմով հողը կը փորէ։ Իր այս թաթերուն ձեւով եւ սովորութիւններովն խլրդի նմանեւուն համար է որ կը կոչեն խլրդաւորիք։

Այս միջատը խլրդիին պէս միջատակեր է, եւ ցաւալի է որ, երկուքն ալ հաստաբաւէս պարտէպներու եւ արտերու համար օգտակար ըլլալով հանդերձ, երկրագործութեան թշնամիներու կարգը դասուած են։ Պարտէպներու եւ դաշտերու մէջ տնհաւատայի աշխուժութեամբ մը կ'ոչնչացնէ մանր միջատները եւ զեւունները, որոնք այնչափ բազմաշատ են՝ որ առանց խլրդիի եւ խլրդաւորիքի օգնութեան, մեր բերքերու մէկ կարեւոր մասը սիրտի ոչնչանային։ Պարտէպնուդ մէջ շատ խլրդաւորիք կայ, վստահ եղիք որ, տնհամար բազմութեամբ ալ միջատներ կը վստան ձեր հողերուն մէջ։ Սակայն խեղճ խլրդաւորիքը իր որսերը հետապնդելու եւ ձեռք ձգելու համար այնչափ աշխոյժ եւ եռանդ կը ցուցնէ որ, իր ճամբուն վրայ պատահած եւ ոչ մէկ խոչնդոտ կրնան կասեցնել զինքն։ Այս խոչնդոտներն

ալ մեր պարտեզներուն մէջ մշակուած բոյսերու արմատներն են ընդհանրապէս: Միջատ մը որսալու համար, շատ մը բոյսերու արմատները կտրելով ջարդելով, իր արահետը կը բանայ կ'անցնի կ'երթայ: Եւ հիմա եթէ իր օգտակարութիւնը հասուցած վիտան հետ բազդատենք, շատ քիչ պիտի գտնանք: Որով՝ պարտիզպան մը իրաւամբ պիտի ըսէ այդ խորդածղրիթին թէ՝ «հեռացիր գուն իմ հողերուս մէջէն, ոչնչացունելիք միջատներդ ինծի թող, հասուցած վիտագոգուէդ աւելի է»:

Ոմանք այնպէս կը կարծեն թէ, խորդածղրիթը իր ջարդած արմատներն ալ կ'ուտէ. բայց այս կարծիքը շատ սխալ է, անիկա էսպէս միջատակեր է, եւ երբեք բոյսով չ'ապրիր: Երբ անոր ստամոքսը ճեղքէք, միջատներու կտորուանքէ՛ զատ ոչինչ պիտի գտնէք հոն: Իր որսորդութեան մէջ եթէ նուազ աշխոյժ ըլլար, եւ փոխանակ իր արահետը ուղիղ գծերով բանալու, եւ հանդիպած արմատները անխնայ ջարդելու, անոնց բոլորաթէն չըջան ընելով իր փնտռած միջատին տեղը երթար, այն ատեն երկրագործ, սլարտիզպան, իրենց անզուգական օգնական մը պիտի ունենային վիտակար միջատները ոչնչացնելու համար: Բայց ի՞նչ օգուտ որ, ամէն պարտիզպան, զայն անիծելու հարկին մէջ կը գտնուի իրաւամբ, եւ իր մշակութեանց ամենէն վտանգաւոր պատուհարը կը նկատէ:

Խլրդածղրիթը գարնան մէջ կը զուգաւորի, եւ 8—10 օր վերջը 2—300ի չափ հաւկիթներ կ'ածէ հողին տակը, որ 5—6 հար. միթր խորութեամբ առաջաց յատկապէս կը պատրաստէ հաւու հաւկիթի խոշորութեամբ գոգաւոր (չուխուր) բայն մը: Հաւկիթները կանեփի (ֆենելիտ) հատիկներու խոշորութեամբ, դեղնադոյն կանաչ եւ երկայնաձիւ կ'ըլլան, եւ ամենքը կծիկի մը պէս իրար փակած մածուցիկ նիւթով մը: Այս հաւկիթներէն կը ծնին քանի մ'օր. վերջը փոքր դեղնակներ, որոնք չափահաս խլրդածղրիթի մը ձեւը ունին քիչ շատ, բայց թեւ չ'ունին. ճերմակ կըլլան զոյնով եւ երկայն 8 հազ. միթրի չափ: Բանի մեծնուն, գոյնեւորին կը միթալին եւ 4 խորխոցումէ վերջ կատարեալ միջատ կ'ըլլան մինչեւ հետեւեալ գարնան:

Բայց երեք տարիէն միայն իրենց հասակը վերջնականապէս կը լրանայ:

Ստորին դասակարգի կենդանեաց շատերուն պէս խլրդածղրիթն ալ ձմեռը ամբողջ թմրութեան մէջ կ'անցունէ, թաղուելով հողին տակը շատ խորունկ: Աչնան երբ ուտելիք չի գտնայ, իր ձագերուն մեծ մասը ուտելով կ'ոչնչացնէ: Գարնան հետ միկտեղ կը վերահենդանանայ անիկա, եւ կամաց կամաց վեր ելլելով, հողին երեսէն 1—2 մատ վար բազմաթիւ ներքուղիներ կը բանայ հորիզոնական զիրքով. որոնք հողին չարնալով եւ ձաթաւելովը երկան կուգան եւ յայտնի կ'ըլլան: Ընդհանրապէս թիթեւ հողերու մէջ կը գտնուի. պարտէզ կամ դաշտ տարբերութիւն չունին իրեն համար, բաւ է որ հոն որսալու միջատներ գտնայ: Իւր ներկայութիւնը վարժ պարտիզպաններ չուտով կը հատկան, երբ տեսնեն իրենց ամուսնուն մէջ տնկուած բոյսերու ուսուց թուով չորնալը:

Մինչեւ ցարդ խլրդածղրիթը ոչնչացնելու համար բազմաթիւ միջոցներ հնարուած են, բայց անոնց եւ ոչ մէկը գոհացուցիչ կերպով յաջողած է: Ահաւորակ ամենէն աւելի աղդու միջոցները:

Ածուներուն երկայնութեանը եւ լայնութեանը 15 հար. միթր խորութեամբ փոսիկներ (պզցիկ հեկսեֆ) բացէք, որոնց եզերքները ուղղաձիւ կտրուած ըլլան պատի մը պէս, եւ իրարմէ 2 միթր հեռաւորութեամբ բացուած: Յետոյ այդ փոսիկներուն մէջ թաղեցէք ծաղիկի թաղարներ (սագալ) իրարմէ մէկ մէթր հեռաւորութեամբ. այսինքն թաղարներուն բերանը պէտք է ճիշդ փոսերու յատակին հաւասար գտնուի:

Տարակոյս չի կայ որ, առաջաց թաղարներուն յատակը գտնուած ծաղիկը զոցելու էք, որպէս զի մէջը ջուր բռնէ: Թաղարներուն բերնի լայնքն ալ փոսերու լայնքին չափ ըլլաւ են, այսինքն՝ 15 հար. միթր: Երբ ամբողջ թաղարները թաղէք, այն ատեն մինչեւ իրենց կէսը ջուր լեցուցէք: Խլրդածղրիթները իրենց ընդ գեանեայ ընթացքին մէջ, երբ փոսերուն եզերքը հասնին, ետ չեն դառնար, այլ կը փորձեն շարունակել իրենց ճամբան. եւ երբ թաղարներուն բերանը հասնին, մէջը կ'իյնան. իսկ եթէ մէջտեղուան:

քէն դուրս ելան, փոսերուն եզերքէն վեր չեն ելար, այլ կը դառնան եւ փոսերուն երկայնութեանը արագութեամբ կը վազեն ծակ մը գտնել եւ մէջը մտնելու համար. այն առան թաղարի մը պատահելով մէջը կի՛յնան, բայց անմիջապէս չեն ստակիր, երկար ժամանակ կը լողան մէջը, եւ երբ յագնին եւ անօթութենէ ուժաթափ ըլլան, այն ատեն կը խեղդուին: Յորեկները զրեթէ խորգածըղրթները դուրս չեն ելար, աւելի գիշերները կը պտտին:

Այս միջոցը յարմար կուգայ փոքր պարտէզներու համար. բայց բաւական մեծակի ծախքի մը կարօտելուն համար անկարելի է ընդարձակ պարտէզներու մէջ կերակրել:

Երկրորդ՝ այս միջոցով բոլոր խորգածըղրթները չէք կրնար ոչնչացնել, այլ անոնք որ դուրս կ'ելն եւ փոսերուն կը հանդիպին. մանաւանդ հաւկիթները եւ նորածինները բոլորովին ազատ կը մնան: Ամենէն աւելի յանձնարարելիներն են հետեւեալները:

Գարունին ամուսնի զերիած ատեննիդ, հողին երեսը փոխադրած նափթալին ցանեցէք: Նափթալինը զօրուար միջատասպան մ'է, որ հողին հետ խառնուելով, ոչ միայն խորգածըղրթները կ'ապանէ, այլ եւ իրենց ձաղերը եւ հաւկիթները կ'ոչնչացնէ, եւ հողին մէջ գտնուած ուրիշ միջատներն ալ մէկտեղ:

Նափթալինը ցանելու համար, հաւատար չափով աւազի հետ խառնելու է, որ ամեն տեղ հաւասարապէս տարածուի: Մէկ արտավար (skodli) տեղի համար վեր ի վերայ 50 օխա պէտք է, որ եթէ այսպէս մեծ քանակութեամբ առնէք, մինչեւ 2 զրուշի կամ 100 փարայի կրնաք գտնել օխան դեղտվածառներու քով: Այս հաշուով իւրաքանչիւր արտավարի համար 100—150 զրուշի ծախք մը ըրած պիտի ըլլաք, թէեւ առաջ շատ կ'երեւի, բայց իր ազդեցութիւնը 2—3 տարի կը տեսէ:

Երրորդ միջոցը որ կը յանձնարարուի, վերինէն աւելի ազդու է: Գարունին երբ հողերնիդ պիտի հերկէք, պատրաստեցէք առաջուց քուրչի կտորուանք, զորս պէտք է խիստ մանր մանր փորել. եւ թրջել քաղիւղով: Տարածեցէք այդ քուրչերը հողին երեսը եւ հերկեցէք: Մեծ մասամբ հողին

տակը ապրող միջատները կը ստակին բոլոր խորգածըղրթներուն հետ. եւ մէկ արտավարին վեր ի վերայ 50—60 զրուշի ծախք մը ըրած պիտի ըլլաք, որ քանի մը տարիներ շարունակ հողերնիդ միջատներէ ազատ մնացած կըլլայ: Եթէ քուրչի տեղ դուրծածէք բրդեղն եւ նոյն խի բուրդի մանրութեան, այն ատեն աւելի ազդու կըլլայ, եւ հողերնիդ ալ քանի մը տարուան համար բաւական ազդուած: Որովհետեւ բուրդը բոյսերու համար աննշարար նիւթեր կը պարունակէ իր մէջը:

Ոմանք քուրչերը կամ բուրդը քարկալով թրջելէն վերջը, վրան կը ցաննեն նափթալին որ աւելի զօրուար կ'ըլլայ անշուշտ:

Դ. ԲՈԼՍ

ՀԱՒԿԻԹԸ ԵՐԿԱՐ ԱՏԵՆ ԹԱՐԾ ՊԱՀԵԼՈՒ ՄԻՋՈՑ

(Պատասխան թիւ 31 հարցման)

Կէլիպօլուէն հարցում էր մեզ թէ, հաւկիթի թարմը ի՞նչպէս ճանչնալու է, փոխանակ հաւկիթը երկար ատեն ի՞նչպէս թարմ պահելու է հարցնելու: Արդ երկուքին ալ կը պատասխանենք, սրովհետեւ առաջին հարցման ալ պէտք ունեցողներ կը գտնուին անշուշտ:

Հաւկիթին թարմը թէեւ շատ միջոցներով կը ճանչցուի, բայց մենք դիւրին միջոց մը միայն ցոյց պիտի տանք այս անգամ, որ հետեւեալն է:

Հաւկիթը բռնեցէք ձախ ձեռքերնուդ բռնած մատին (պաշ քարմաղը) եւ ցուցամատին մէջ, այնպէս որ բարակ կողմը բռնած մատին վրայ ըլլայ. իսկ հակառակ կողմը ցուցամատերնուդ տակը. միւս ձեռքերնիդ ալ միաց ւցէք խողովակ մը կապուելու ձեռով. առաջուց ճրագ մը վառած կ'ըլլաք, եւ մէկ աչքերնիդ գոցելով կը նայէք հաւկիթին վրայ, որ ճիշդ ճրագին դիմացը բռնած էք. եթէ հաւկիթին մէջ պարսպ տեղ չի տեսնաք, այն ատեն վստահ կ'ըլլաք թէ, անկիա նոյն օրը սո՞ւսած է, եւ որչափ պարսպ տեղ շատ գտնուի, այնչափ հին կըլլայ հաւկիթը:

Անշուշտ շատերնիդ նմարած ըլլալու էք

թէ, եւիած հաւկիթ մը զլուսէն կտորած ա- տեննիդ երբեմն մէջի ճերմակը մինչեւ բե- րանը լեցուն կըլլայ. որ նշան է իր թարմու- թեան. իսկ երբեմն ալ այդ ճերմակը շատ վար իջած եւ վրան ալ փոսիկ մը ձեւացու- ցած կըլլայ. այս ալ նշան է իր օթեկութեան (պայաք). եւ շատ անգամ ալ ճերմակը այն- չափ վար իջած կ'ըլլայ, որ մէջի գեղինը մասամբ կ'երեւի, այս ալ նշան է որ հա- կիթը շատ հին ըլլալով, աւրուելը մօտեցած է. եթէ մէկ քանի անգամ վարժութիւնը- նէք ճրագին նայելու, ալ ինքնիրեննուդ կըր- նաք վեր ի վերոյ հասկնալ թէ, հաւկիթը քանի՞ օրուան է. եւ տեսէք ի՞նչպէս Առէք նոյն օրուան ածուած 1—2 3 հաւկիթներ, առաջին օրը լոյսին նայեցէք վերը բացառ- րուած եղանակով, որ անշուշտ ամբողջովին լեցուն պիտի գտնաք զրեթէ. հետեւեալ օրը կրկնեցէք ձեր փորձը, եւ նայեցէք թէ ո՞ր- չափ պակասած է, անշուշտ շատ քիչ բան պի- տի գտնաք, բայց ի՞նչ որ ալ գտնաք, նշան ըրէք մատիտով մը, եւ շարունակեցէք ձեր փորձը այսպէս ամեն օր, մինչեւ որ այդ հաւկիթները աւրուելու հասնին. Այսպէսով դիւրութեամբ կրնաք ճանչնալ հաւկիթին թարմը. Կը տեսնէ՞ք, սխալ հարցումներն ալ երբեմն իրենց օգուտներն կ'ունենան. Գրեմք հիմա երկուր առեն թարմ պահելու եղանա- կին վրայ:

Խիստ շատ միջոցներ առաջարկուած են թէ եւ բայց անոնց մեծագոյն մասը ամենե- լին սպառուած արդիւնքը տուած չեն: Մի- միայն մէկ միջոց մը կայ որ թէ ածան, եւ թէ գոհացուցիչ արդիւնք տուած է միշտ, զորս մէկ քանի տարիներէ ի վեր Եւրոպայի մէջ կը գործադրեն: Ահաւասիկ այս մասին նէյսի երկրագործական վարժարանի Տնօրէ- նին ըրած փորձերէն մէկ քանին կը ներկա- յացնենք ի ստորեւ, միայն գաղափար մը տալու համար ընթերցողաց:

Փորձերը կատարած է անցեալ տարի Յու- լիս 20 էն սկսելով, եւ վերջացուցած այս տարի մարտի վերջը: Այսինքն՝ այլ եւ այլ միջոցներով 8 ամիս շարունակ հաւկիթները պահած է, այդ միջոցներուն ո՞րը աղէկ ը- լլով հասկնալու համար:

1⁰. Հաւկիթները աղջուրի մէջ պահած է որոնք թէ եւ չեն աւրուած, բայց աղը ժա-

մանակին տեւողութեամբ անոնց կեղեւներէն ներս անցնելով, հաւկիթները չափազանց աղի եղած եւ համերին ալ փոխած են, հետե- լաւար անգործածելի:

2⁰. Լեմոնի եւ նարնջի պէս թուղթերու մէջ փաթեւելով պահած է. 100 ին 80 հատը աւրուած եւ հոռած են:

3⁰. Հաւկիթներուն կեղեւը աղով չփած է. 100 ին 70ը աւրուած են:

4⁰. Թեփի մէջ պահած է. նոյնպէս 70 % աւրուած:

5⁰. Եռացած ջուրի մէջ 15 երկվայրկեան (սանիթ) ձգելով, հանած, չորցուցած եւ պահած է. 100 ին 50ը աւրուած են:

6⁰. Պաղէզի լուծուածքի մէջ, այսինքն՝ ջուրի մէջ պաղէզ (շապ) հալեցնելով, հաւ- կիթները մէջը պահած է, բայց վերինն պէս 50 % աւրուած են:

7⁰. Ուռտակոն թթու (սախս սալիսիլիք) կոչուած աղը ջուրի մէջ հալեցնելով, հաւ- կիթները մէջը պահած է, բայց վերիննե- րուն պէս 50 % աւրուած:

8⁰. Հաւկիթներու կեղեւը խոզի ճարպով չփած է, որ միայն 100 ին 20ը աւրուած է, միւսները աղէկ մնացած:

9⁰. Ձար մոխիրի մէջ պահած է. վերինին պէս միայն 100 ին 20ը աւրուած է:

10⁰. Վազըլինով չփած է հաւկիթներու կեղեւը. ամենն ալ մեծ մասամբ աղէկ մնա- ցած, հազիւ թէ 2-3 հատ աւրուած են:

11⁰. Կրաջուրի (ֆրէճ սոլը) մէջ պա- հած է. ամենն ալ աղէկ մնացած են:

12. Սիլիքաք սթ սոլս կոչուած բաղադրու- թեան մէջ պահած է, ամենէն աղէկ զը- րութիւնը, որ եւ ոչ մէկ հաւկիթ մը աւրած է. բայց սուղ ըլլալուն անգործածելի:

Թէ եւ ուրիշ շատ միջոցներով փորձած է, բայց անոնց եւ ոչ մէկը աղէկ արդիւնք տը- ւած չըլլալուն դանց ըրինք հոս գրելու: Բացատրենք հիմա կրաջուրի դրութիւնը, որ ինչպէս վերը ըսինք, հիմա բոլոր Եւրոպայի հաւկիթավաճառները, երկրագործները, տու- ները, եւ անոնք որ մեծաքանակ հաւկիթ ստահելու ստիպուած են շարունակ, լաւ գը- տած են եւ կը գործադրեն միայն ան:

Կարաւներու կամ բղուղներու (ֆիւփ, ֆա- վանօզ) մէջ շարեցէք ձեր հաւկիթները քով քովի, ծայրերին վար եւ զլուսնին վեր:

բայց նայեցէք որ ճաթած կամ կոտրած չի դառնուի անոնց մէջ. ինչպէս եւ շատ հին հաւկիթներ, երբ մինչեւ վեր լեցուին հաւկիթները, (բերնէն 5 մատի չափ վար), այն ատեն ձեր կրաջուրը լեցուցէք վրան, որ պէտք է օր մը առաջ պատրաստած ըլլաք հետեւեալ կերպով:

Անուշ ջուր կ'առնէք, 1 օխային մէջ կը խառնէք 4 տ'րէմ կիր (ֆիրէն), ըսել է իթէ 10 օխա ջուրի պէտք ունենաք ձեր հաւկիթները ծածկելու, 40 տրէմ կիր դնելու էք: Խառնելէդ վերջը, թողուցէք որ հանդարտի եւ դիրտը (քօրքու) տակը իջնալէն յետոյ, կամաց մը երեսի ջուրը կ'առնէք, որու մէջ կիրը լուծուած է. եւ այդ ջուրը կը լեցնէք հաւկիթներուն վրայ եւ ամանին բերանը ծածկելով կը պահէք: Եթէ ամառը ընէք այս գործողութիւնը, անշուշտ զով տեղ մը դրնելու էք: Չարիքը ճիշդ գործածեցէք. իթէ կիրը շատ զրած ըլլաք, վերջը՝ հաւկիթները խաշած ատեննիդ, ջուրին մէջ կը պայթին: Փորձեցէք այս միջոցը՝ շատ գոհ կը մնաք, մանաւանդ որ, գրեթէ ծախք ալ չունիք:

Ղ. ԲՈՒԱՏ

ԱՌՏՆԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆԵՐ

Հանրագիտակի Ռ. չրջանը սկսելն ի վեր կարելի եղածին չափ, ամեն ջանք ի գործ դրուած է ժողովրդին օգտակար հանգիստնալու համար: Մենք եւս մեր կարողութեան ներածին չափ, կ'աւելնէք օգնել տան տրիկիններուն հեռացնելով զիրենք, այն կարգ մը ըմպելիներու ծախքերէն, որոնք եթէ տան մէջ պատրաստուին, խիստ աժան եւ դիւրամատչելի կ'ըլլայ ամեն դասակարգի. օրինակի համար, իթէ երթաք եւ գնել ուզէք, մրգօղի մը որուն ռաքափիս կը գրուցեն, առ նուազն չիչին 15 դրչ պիտի վճարէք, մինչդեռ տան մէջ պատրաստելով՝ այդ 15 դրչուով փոխանակ մէկի՝ չորս, հինգ չիչ պիտի ունենաք. այսպէս են նաեւ, անիգէղը, չառդուօզը, եւայլն. որոնք խիստ սուղ կը ծախուին, եւ որոնց պատրաստութեան եղանակը հետզհետէ պիտի ներկայացնենք մեր ընթերցողաց:

Մեր եսնափ դասակարգին մէջ, քանի մը տարիներէ ի վեր սովորութիւն եղած է, պատրաստ զօնեաք կ'առնեն, մէջը տեսակ տեսակ համեմներ կը ձգեն, եւ իրր թէ մրգօղի պատրաստած կ'ըլլան. չենք ըսեր թէ՝ ամենուն շինածն ալ գէշ կ'ըլլայ, բայց, նախ որ սուղ կ'ըլլայ, որովհետեւ դրսէն առնուած վար տեսակ քօնեաքները. հարկաւորդ ալքօլաշափով հաշուով, հազիւ թէ 50 աստիճան կը ցուցնեն: Արդ, ձեր առած քօնեաքի մէկ չիչին, առնուազն 5 դրչ պիտի վճարէք, եւթադրելով որ 1/2 օխա կըսէ, ալքօլին օխան 10 դրուչի առած պիտի ըլլաք, եւ այդ քօնեաքով ձեր պատրաստած մրգօղին համար, իւրաքանչիւր օխան, միայն ալքօլի համար 10 դրուչ ծախք ըրած պիտի ըլլաք: Մինչդեռ իթէ զուտ ալքօլով պատրաստեք ձեր մրգօղին, այն ատեն իւրաքանչիւր օխան, 2 դրուչի կամ 100 փարտի ծախք մը ըրած պիտի ըլլաք, որովհետեւ զուտ եւ աղէկ ալքօլին օխան, դեղավաճառներուն քով, 5 դրուչի կը ծախուի, որ վեր ի վերայ հարկաւորդի ալքօլաշափով, 90-95 աստիճան կը ցուցնէ, կամ Պօլսոյ կուտօյով 38-39 եւ մինչեւ իսկ 40 աստիճան:

ԿԱՆԱԶ ԸՆԿՈՒՋԻ ՄՐԳՕՂԻ

Այս մրգօղին պատրաստելու համար, պէտք է որ ընկուզը շուրջ ըլլայ. այսինքն՝ ընկուզը տակաւին փոքր եղած ատեն, միջուկը տակաւին կազմուած չըլլալով, երբ ասեղը մէկ կողմէն խոթէք, առանց արգելքի միւս կողմէն դուրս կ'ելլայ, եւ կոտրած ատեննիդ ալ մէջը չողիքի պէս կ'ըլլայ: Առէք հիմա.

Շողոտ ընկուչ	15 հատ
Մէլանի դարիճենիկ (թառչին),	
որ ամենէնընտրելագոյն տեսակն է	1/2 կաւա
Մեխակ (քարէնֆիլ)	1/2 կաւա
Մէլընկուչի (հինտիստան ճէվիզի)	
արտակեղեւ (մաւսի)	1/2 կաւա
Աքօլ 85 աստիճան	2 1/2 լիթր
Շաքար	1 1/4 քիլո
Զուր	1/2 լիթր

Ընկուչները ծեծելու է, եւ 24 ժամ բաց օդին ձգելու է որ սեւնայ. յետոյ, մինչեւ 30 օր ալքօլին մէջը թրջոց դնելու, եւ

վերջը պարզուտե անցնելու է: Շաքարին վրայ, վերը յիշուած ջուրը աւելցնելով՝ շուրուպ շինելու է, եւ համեմները մէջը լեցունելով, խառնելու է: Եւ երբ այս ամենը կատարէք, պէտք է ամենը մէկ ալքոլին մէջ լեցունել. ու յետոյ, կրկին թղթէ պարզուտե անցնելով. վրան այնչափ ջուր աւելցնել, որ 5 լիթրաի հաւասարի:

* *

Քասիի (գինաուշա) մրգողի

Հասունցած քասի	$\frac{1}{2}$ քիւօ
Քասիի տերեւ	85 կում
Դարիճենիկ	$1\frac{1}{2}$ կում
Մեխակ	1 կում
Ալքոլ 56 աստիճան	3 լիթրա
Շաքար	625 կում
Ջուր	$\frac{1}{2}$ լիթրա

Պարզները եւ տերեւները ճզմեցէք եւ 15 օր ալքոլին մէջ թողուցէք, շաքարին վրայ վերոյիշեալ ջուրը աւելցնելով, շուռուպ շինեցէք. եւ համեմներուն հետ խառնեցէք, ի վերջոյ, ընկոյզի մրգողին պէս ըրէք:

* *

Խառն մրգողի

Քասի	$\frac{1}{2}$ քիւօ
Կեռաս	$\frac{1}{2}$ »
Արքամօր (աղած չիլէյի)	$\frac{1}{4}$ »
Վայրի Կեռաս	$\frac{1}{4}$ »

Ասոնք զատ զատ ամաններու մէջ դնելով, վրան իրենց քանակութեան չափ ալքոլ լեցուցէք — ալքոլը 56 աստիճան ըլլալու է — եւ թողուցէք այսպէս մինչեւ ամիս մը. յետոյ երբ պարզուտե անցունէք ամենքը իրար խառնեցէք:

Առէք հիմա $1\frac{1}{4}$ քիւօ շաքար եւ 2 լիթրա ջուր, շուռուպը պատրաստեցէք, եւ երբոր պաղի, վրան աւելցուցէք $\frac{1}{2}$ լիթրա ալքոլ 56 աստիճան, եւ խառնեցէք վերի երփնաջուրերուն հետ, եւ այնչափ ջուր աւելցուցէք, որ 5 լիթրաի հաւասարի եւ պարզուտե անցուցէք:

* *

Ծիրանի մրգողի

Առէք 20 հատ ծիրան, կուտերը հանելէդ վերջը, մանր մանր մասերու բաժնեցէք,

կուտերը կտրեցէք, մէջի նուշերը ծեծեցէք եւ ծիրաններուն հետ լող դի (խաւանօզ) մը մէջ լեցուցէք, աւելցուցէք 250 կում շաքար քանի մը հատ մեխակ (քարէմֆիլ) քիչ մը դարիճենիկ (թառչին) եւ $\frac{1}{2}$ քիւօ ալքոլ 56 աստիճան, բոլորին բերանը լաւ մը զոցեցէք, եւ ձգեցէք այսպէս մինչեւ 1 ամիս, մերթ ընդ մերթ բոլորը շարժեցէք: Ի վերջոյ ըրէք քամոցէ մը անցուցէք:

* *

Ծիրանի եւ դեղձի կուտերու մրգողի

25 դեղձի, 25 ծիրանի, եւ 15 բալի կուտերը կտրանելով ծեծեցէք, եւ դրէք բըղաղի մը մէջ, լեցուցէք վրան 1 լիթրա ալքոլ, 56 աստիճան, 3 կում դարիճենիկ. 4 հատ նարնջի ծաղիկ, (կթէ նարնջի ծաղիկ չի գտնաք, դեղազործներէն առէք նարնջի ծաղիկ ջուր (օտը ֆլէօն տ'օռանժէ 2 կումի չափ), եւ 120 կում շաքար, որ տառջուց հալած ըլլալու է քիչ մը ջուրի հետ: Այս ամենը պէտք է իրար խառնել. եւ թողուլ մինչեւ 5 ամիս, յետոյ 2 անգամ պարզուտե անցունել: Այս մրգողին կը դարձածուի նաեւ ստամոքսի անհանգստութիւն զգացած ատեննիր:

* *

Սալորի (միւրսիւմ երիի) մրգողի

Պատրաստեցէք ճիշտ ծիրանի մրգողին պէս:



Կապեթսներու բիծերը նաանելու միջոց

Կապերտներու վրայի իւղի եւ ցիխի բիծերը կրնաք հանել, առանց գոյնը աւերելու, հետեւեալ բաղադրութիւնով.

Ճերմակ օճառ	$\frac{1}{4}$ քաշ
Անուշատը (նիշասըր)	90 կում
Եթեր	30 »
Ալքոլ	30 »
Կլիստոլին	30 »

Օճառը մանր կտրներու վերածելով մէկ քաւորդ լիթրա անձրեւի ջուրի մէջ հալեցուցէք, աւելցուցէք վրան վերոյիշեալ նիւթերը եւ լիթրա մ'եւս անձրեւի ջուր: Բարակ խողանակով մը բիծերը շփեցէք այս խառ-

նուրդով, եւ մաքուր ջուրի մէջ թաթխուած լաթով մը շփեցէք, ու յետոյ չոր լաթով մը կրկին շփելով չորացցէք :

* *

Կոծիծները անհետացնելու միջոց

Տք. Լուվէլ Տիւօնկրոէ, դարման մը կը յանձնարարէ, որ ընդհանրապէս յաջողած է թէ մարդոց եւ թէ անասուններու կոծիծները անհետացնելու, առանց հետք մը ձգելու : Պէտք է կոծիծները օրը անգամ մը թեթեւապէս օծել, տաք պի խօմաղ սը քօրաւի եռացեալ լուծմամբ, մինչեւ որ անոնք անյայտանան :

Ահաւասիկ պատրաստութիւնը. գտեալ եւ եռացած ջուրի մէջ այնչափ պի խօմաղ սը քօրաւ նետեցէք, որչափ ջուրը կարող կըլլայ հալեցնել. եւ թողուցէք որ պաղի : Պաղելէն վերջ, պի խօմաղին աւելորդ յատակը կ'իջնէ, եւ մնացեալ հեղուկը կը ներկայացնէ պի խօմաղի խտացեալ լուծումը, զորս պէտք է պաղ գործածել : Այս լուծումը քին մէկ կիրարկուած թաւական է ձիերու ուռն, գերուն վրայ գտնուած կոծիծները անհետացնելու : Բայց որովհետեւ անասունին մարմնոյն այս մասին մորթը բարակ է, ուռն գերը թուրովին կը կեղեւին, բայց քիչ ժամանակէն թէ՛ մորթը կը վերանորոգուի եւ թէ հոն գտնուած բարակ մաշերը կրկին կը բուսնին առանց իսկ սպի մը ձգելու :

* *

Թե ի՞նչպէս մաքրելու է սեւ գուլպաները առանց գոյնը փոխելու

Կէս օխտ թեփ չլարչի (թէրչիկն) մը մէջ ծրարելով զրէք 10 օխտ ջուրի մէջ եւ եռացցէք. ծրարը սեղմեցէք որ մէջի կաթի պէս ճերմակ ջուրը ամբողջ դուրս տայ, գուլպաները դրէք մէջը եփեցէք, վար առէք, եւ ըստ սովորականին չիքի ըրէք. 2—3 անգամ ալ պաղ ջուրէ անցուցէք, քամեցէք, յետոյ ջուքին կախեցէք որ չորնայ : Օճառ ամենեւին մի գործածէք լուսուր համար. եւ չորցընելու համար ոչ արեւին կախեցէք եւ ոչ ալ կրակին :

ԱՐԱՔԱ

ՀԱՐՑՈՒՄ

Թիւ 33. — Տեսպիզոն. — Ա. Տիրատուրեան. — Բաջալերուելով այն թերթի ազդարարութենէն թէ « Պարտիզանական » հարցմանց եւս պատասխան պիտի տրուի, խնդրեմ հաճեցէք պատասխանել այն հարցումներու :

1. Արդեօք կայ միջոց մը « Բամբէկան » բազմացնելու, եւ ո՞րն է :

2. 2^է կարելի « Բամբէկան » պատու տուել :

3. Վերոյիշեալ ծաղիկն միեւնոյն արմատին վրայ աճեցնել մէկ երկու եւ ալ աւելի գոյներ (միշտ նոյն տեսակէն) :

4. Եւ ի՞նչպէս պէտք է խնամել այդ ծաղիկը :

Բանի մը թաղար « Բամբէկայ » ունիմ, որոնք անցեալ աշնան շատ կոկոն տուին, բայց շատ քիչերը ծաղիկ տուին, տեսակ մը հիւսանդութենէ բռնուեցան (դեղնեցան կոկոնները) եւ կամաց կամաց թափեցան բոլորն ալ. բայց իրենց քամեցնուին շատ լաւ են, նամանաւանդ այս գործնան շատ զեղեցիկ կերպով սկսան աճիլ : Որպէս զի կոկոնները չթուսնին ի՞նչ պէտք է ընել. ի՞նչպէս պէտք է պահել ձմեռը :

Կարծեմ մի քիչ շատ եղաւ հարցումներս բայց կը ներկէ որ մի հարցում եւս ընեմ :

Ծաղիկներ կը ցանեմ եւ յանկարծ արմատէն կը տրուին եւ կը թուսնին. կ'երեւի թէ չարածնի որդէն ընողները, չկա՞յ ատոր միջոցը, որ ազատուին իմ ծաղիկներս այդ անգղամ ճճիկներէն :

Յուսով եմ որ պիտի պատասխանուին հարցումներս թերթիդ միջոցաւ, որով պիտի մընամ ձեզ երախտապարտ :

ԽՆԴԻՐ Բ.

Որո՞նք են այն երեք յաջորդական թիւերն, որոցմով ուղղանկիւն եռանկիւն մը կը կադմուի :

Տ. ՊՕՋԱՅԵԱՆ

ԶՈՒԱՐՃԱԼԻՔ

ՊԱՅՈՒՍԱԿ

ՖԻԼՈՐԵԱ

Կլկկածայն և դեղնորակ թռչիկի մը անունն է, որ փոխանցուած է այդ զբոսավայրին որնոր առանց ներողութիւն խնդրելու, Այիթէֆանօի և Գիւլիք Զէքմէճէի մէջտեղ մտած բազմած է:

Փորրիկ ծառատանով մը և ուրուտ առաջանով մը զովաւորն հանգստավայր մ'է Ֆիլօրեան, որ ալ կողմը բանջարեղիկոց պարտէզովն և ետին Գալաթիա զիւղակովն՝ ի հնումն միայնակ կը տնքար՝ այրի մնացած արու հնդկահաւի մը նման, բայց երկու տարիէ ի վեր է, Պօլսոյ երկաթուղայն տեսչութիւնը այս վոյքն իր հովանաւորութեան ներքեւ առնելով, այդ մնացուած Ֆիլօրեան բոլորովին փոխուեցաւ այժմ (հանուեցաւ չ'հասկըցաւ):

Կիրակի և ուրբաթ օրերն, Սիրքէճի կայարանէն երթուղարձի տոմսակազինը և զրուշի իջեցնելէ ի զատ, Ֆիլօրեայի սրճարանապետին ալ խոտիւ պատուէրած է որ յաճախորդները չ'կեղեքէ. բոլոր ըմպելեաց պատշաճ գիններն ցուցակադրած է նոյն խակ երկաթուղայն կայարանին մէջ ի տես հանրութեան. անոնք որ հետերնին տարած են իրենց ուտելիքն ու խմելիքն, պէտք եղած աթոռի և սեղանի համար ալ չափաւոր գին մը որոշած է, ուր գացողը ուրիշ այս տեսակ բացօդեայ զբոսավայրերու խանութպաններէ կողպաւեղլու երկիւղը չունի հաս:

Պօլսոյ ժողովուրդը այս նոր զբոսավայրին՝ թէ աժնութեանը և թէ գեղեցի-

կութեանը այն ատիճանը յարեցաւ, որ ամեն կիրակի և ուրբաթ օրեր, խուռն բազմութիւն կը դիմէ անդ, և հիմայ միւս զբոստեղեաց խանութպաններուն ամենքն ալ՝ դրեթէ ճանճորսութիւն ընել սկսան. մանաւանդ Մադրի Գիւլի մի քանի սովաղլուկ խանութպաններ շատ ծուռ աչքով նայիլ սկսան մեր փորրիկ Ֆիլօրեային, որ իրենց առօրեայ կողպաւոր աղբիւրներն, խլեց առաւ ճեռքերնէն:

Անցեալները այդ զբոսավայրին՝ կարծէնք ծնեղեան տարեգործն է եղեր. անհաւատալի հոծ բազմութիւն մը զբոսավայրին մէջ չ'սեղմելով, բոլորաբիւրեղաշտիւն ու արաւերը լցուած էին. մարդկային այս կոհակներ, աւեղական շեշտակի ճառագայթներու տակ քրտինքի մէջ կը լողանային և զովանալու համար, առանց ջուրի ճիւղ կը կոնծէին. ու ընթերցողաց կը թողունք մակարէրել այդպիսեայ ջերմաշտիւն որ ատիճան բարձրանալը. Բայց անոնց մի առ մի նկարագիրն ընել խիստ երկար ըլլալուն, վերադարձող կառախումբերուն վակօններու մէջ խուժող մարդ արարածներու՝ աներեւակայելի խուճապն ու իրար անցումը՝ կարելի եղածին չափ նկարագրել պիտի ջանանք:

Այն կիրակին, Մերինոս աղան ընտանիքը Ֆիլօրեա տարած էր, և իրիկուան կանուխէկ ետ դառնալու համար, ժամը տասնուկէսին կայարան դարձած էր, տասն և մէկի կառախումբին հասնելու, բայց որդին Լեւոն, բազմութեան մէջ անյայտանալով, մայրը և քոյրը բարձրաճայն, « Լեւոն » կը պօռային ու թերեւ լսէ ու դայ իրենց միանայ:

— Բան չունիքնէ պօռացէք. հիմա այնչափ հազարներով Լեւոն կայ որ՝ մեր Լեւոնը զինքը կանչելիք իմանայ պիլէ,

կարելի է ուրիշ Լեւոն մը կը փնտռէն կոր ըսելով հոգ չընէր:

— Մէյ սանկ վեր վար փնտռէիր:

— Աս խալապալըխին ո՞ւր պիտի գըտնաս, մենք չըմէնտըֆէռ նասելու մէկ ճորը նայինք. ալէսըթուռ պիլէթ ունի ան, ինտոր ըլլայ նէ կու գայ մեզ կը գըտնայ:

— Չօճօւիս ես Մէրինոս աղա, իսնդ գեմ զահէր որ չօճուիս հոս պիտի ձգեմ տէ ելլամ երթամ:

— Ետքը չըմէնտըֆէռին մէջ, տեղ չը պիտի գտնանք:

— Աս խտար ինտանը ինչ ընէ նէ մենք ալ ան կ'ընենք:

— Գո մարիկ, չըմէնտըֆէռը տիւտիւ կը չալէց:

— Խերը տես, աս թրէնն ալ վախուցինք:

— Ան հիմա չէ, ամեն ատեն տիւտիւ կը կը չալէ, զարար չունի տահա ատեն կայ:

— Կերթայ կոր պէ'. նայէ, ճամբայ ելաւ:

— Գա մեղայ ինչ ընեմ, ես խապահաթ ունիմ. նալլէթ օլաճախ Լեւոնը նայէ օրթան ելաւ:

— Իրաւ է, խապահաթը իմն է որ ասանկ օրով ձեզ առի հոս բերի:

— Քեզի պան մը ըսեմ, դուն երթալիք ունիս նէ ել կ'ընայ. գա մեղայ կիտեսքի լեւներուն կլոխը մնայեր ենք...

— Հապա ո՞ւր ենք, չօք չէյ պէ. լեռը քա՞նի պոչնուղ ունի:

— Վույ մեղայ քի մէյմնալ չօճուխներով ոտքս տուռնէն դուրս գնեմ:

— Իչտէ մարիկ, Լեւոնը կուգայ կոր:

— Մօ ո՞ւր գացիր խայիպ եղար, քէօլ օլաճախ:

— Տուտու, իէրիվանները կիւլէշ կը պոնէին կոր, սէյիր կընէի կոր:

— Թէփէյիդ ետմուլս մը իշնամ որ երթաս սորվիս:

— Ինչ կը զարնես կո՞րր...

— Հիմա թէրպիլէի ատեն չէ, հալիս մեզի կընայի կոր: Հայտեցէք երթանք տէ թռէնին ատենը հասկնանք:

Մէրինոս աղան մեծ գժուարութեամբ ընտանեօք կայարան մտնալ յաջողեցաւ:

— Միւսիւ, սահաթ գաչաւ թռէն վար:

— Պոնտան սողրա վար եէտի եիրմի պէշ...

— Գա վո՞ւյ... կէս գիշերներուն մնայինք:

— Սուս եղիր պէ', անոր ըսածը ալաֆրանկա սահաթ է:

— Գուղում հայրիկ, ատ նոր մօտա սահաթէն ինծի հաս մը կ'առնես:

— Գնայ բանդ Զարուկ, հիմա բիւթիւն խըրսըս քեզնէ կ'առնեմ հա'.

Վերջապէս վերջին կառախուժը հասնելով, բաղմութիւնը խռնեցաւ վակոններուն վրայ.

տեսնելու բան էր վակոն մը մտնելու համար միւռած անհարին պայքարներն.

մէր Մէրինոս աղան, կնոջն ու զաւակացն հետ՝ ութ տասն անգամ

մէյ մը վեր մէյ մը վար վազվզէլէ յետոյ, շնչառալու յաջողեցաւ վակոն մը մտնել

ընտանեօք, ուր Սարաին ձկան պէս իրարու վրայ կայիլ ստիպուեցան մինչեւ

Գում Գարուի կայարանը, ուրկէ ժամը գիշերուան մէկուկէսին հաղիւ տուներնին վերադառնան:

ԱՊՍՊՐԱՆՔ

Օրուան արժանահաւատ թերթի մը մէջ կարդայինք թէ՛ Բալիֆորնիոյ Թրէդ-

նոյէ քաղաքէն մեր աղգայինը գրեթէ թէ (Սիացեալ Նահանգաց ճամբով),

սուայթմ առնուազն յիսուսի չափ հոյու

աղջիկներ կուզեն ամուսնանալու համար խօստանալով յառաջիկային աւելի մեծ գործեր ընել այս գեղեցիկ ապրանքին վրայ: Հարսնացու այս համակրելի էակներու ընդհանուր հայթայթիչն համարեր են կ'ըսէ. մեր Պատուարժան պաշտօնակիցը Աղգ. Պատրիարքարանը, ուրկէ պատասխան տրուեր է թէ՝ Որբանոցներու մէջ պատասպարուած որբուհիները տա-
կաւին չափահաս չեն, և թէ այսպիսի հայթայթումներու համար նոյն գործով զբաղող վաճառականներու դիմելու են:

Այս ուրախառիթ լուրը տուող մեր Մեծարոյ պաշտօնակիցը, կարծիք յայտնած էր թէ՝ այս գործը քահանաներու յանձնելու է. անոնք այնքան ճարպիկ են այս տեսակ գործերու մէջ որ կ'ըսէ, Ամերիկա հարս երթալու յօժարող շատ գիւրաւ 50 կամ 100 աղջիկ կ'ընան գտնալ:

Այդ հարսնացուներուն հետ գրամօժիտ կ'ուզեն թէ ոչ, անգեղութիւն մը տրուած չըլլալուն, և թերթերուս անձկութեան պատճառաւ, այս գործին վրայ մեր կարծիքը յաջորդ թուով պիտի հրատարակենք:

ԶՈՒԱՐԹՈՒՆՔ

Խիստ գեր գիւղի մը երէց, ջորին հեծած դեմական գիւղերը պտըտած պահուն, օրը տարածամեղով կը խորհի հոն մօտը գտնուող պարսպապատ մէկ աւանն անցնել առ այս. դէմը ելնող գեղացիի մը կը հարցնէ:

— Ինչ նայէ տղաս, ուշ մնացի. այս իրիկուն սա դիմացի աւանը կրնամ մտնալ:

— Գեղացին անգամ մը երէցը զննելէ յետոյ ըսաւ:

— Մեր պարսպին դռնէն, ամենամեծ խոտի սայլերն անգամ կ'ընան անցնիլ. ուս-

տի կը յուսամ որ դուք ալ կը սեղմիք:

Մեծն Ժրէտէրիկ, օր մը Վօլթէռին հարցուց:

Գրականութեան ամենէն անտանելի վիճակն ո՞րն է:

— Տէր ալքայ, պատասխանեց, գրած գէ՛հասկցող քննադատ մը ունենալ:

Իգամոյին մէկը, փողոցը տիկնոջ մը քովէն անցած պահուն, « Տիկին ըսաւ, մինչեւ հիմայ ձեզ նման գեղեցիկ արարած մը տեսած չէի »:

Տիկինը իրեն հետ ոյսպէս անպատկառ խօսողին շեշտակի նայելով ըսաւ:

— Եւ ես, ձեզ համար հակադարձն ըսելու կը պարտաւորիմ:

Տիկնոջ այս պատասխանէն զչարելով, մեր իգամոյն յարեց:

— Տիկին, ձեր այս ըսածէն բացայայտ կերեւի որ, դուք ինծի չափ սուտ խօսելու վարժուած չէք եղեր:

Տիկին Մ. . . որ անհամբոյր բնաւորութեամբը խիստ նշանաւոր էր, հիւանդանալով անկողին ինկաւ. օր մը անարին մօտը կեցող ամուսնոյն դռնաւով, փաղաքուշ ձայնով մը ըսաւ:

— Սիրելի ամուսինս, հիւանդութիւնս երբէք հոգս չէ, միայն կը խորհիմ որ եթէ մեռնելու որ ըլլամ, ի՞նչ պիտի ըլլայ քու վիճակդ:

— Ես ալ այն կը խորհիմ թէ, ըստ տրամօրէն ամուսինը. հապա եթէ չ'մեռնելու որ ըլլաս, ի՞նչ պիտի ըլլայ իմ վիճակս:

Զորեքտասաներորդ Լուին, օր մը Վիվօն դուքսին՝ սրիստ գեր էր, կ'ըսէր թէ « Ինչու մարդանք չկատարեր որ քիչ մը նիհարնայ » այս խօսակցութիւնը կ'ըլլար տ'Օմօն դուքսին ներկայութեան:

որն ուր Վիվոն գութն անհամեմատ ա-
ւելի գեր էր:

— Տէր արքայ, պատասխանեց Վիվոն,
ինչպէս մարդանք չեմ ընել, որ չանցնիր
որ առ նուազն ա՛մ ման գութն շուրջը
երեք անգամ չի դառնում:

Գիտնականին մէկը՝ որ վերջին աստի-
ճան ռեզոսիտէր, որ մը նոր հեղինա-
կութիւն մը կարգացած միջոցին, գիրքը
մէկ կողմնեցեալով դնէր:

— Այս գիրքը շատ գէշ գրուած է,
ոճը շատ խրթին է, պարզութիւն չունի,
մարդ բռն մը գրած ատեն, ինչպէս որ
կը խօսի, այնպէս գրելու է:

Հեղինակին բարեկամներէն մին՝ որ
անդ կը գանուէր, ըսաւ:

— Շատ ճշմարիտ է. դուք որ քթեր-
նուդ մէջէն կը խօսիք, եթէ գիրք մը գը-
րէք, հաւասար եղիք որ շատ պիտի զը-
ւարճայնէ ընթերցողը:

Գինովին մէկը առջի գիշեր իր կնկանը
կ'ըսէր:

— Երէկ գիշեր կէսէ խառնախառն ըլլա-
նք անոնք, վաղը առտու ժամ եր-
թամ տէ քառսուն բարանոց մամ մը վա-
ռեմ:

Վայ հայիդ, աս գիշեր հարիւր տը-
րէմ կաղ առնել մոռցեր էիր, վաղը առ-
տուան մոմը ո՛ւր միտքդ պիտի մնայ:

Հարուստ սեղանաւոր մը, բարեկամ-
ները միշտ բազմածախ հայկերոյթներու
կը հրաւիրէր, որոնք կուտէին կը խմէին,
յետոյ ետեւէն զինքը կը բամբասէին:

— Այս ինչ ժամանակի հասանք կ'ըսէր
որ մը դառնութեամբ բարեկամներէն
մէկուն, բոլոր բարեկամներու կը կեր-
ցընեմ, կը խմցնեմ, գործնալ զիս կը
բամբասեն:

— Հոգ մի ընել, ըսաւ բարեկամը,
կուտեն, բայց չեն մարսել անկէ է:

Էրիկ կնկան մէջ:

— Գլխուս փորձանք մը պիտի գոր որ
այս իրիկուն, բայց աստիճանով ազատե-
ցայ:

— Հազար փառք տուր. եթէ աստու-
ծոյ ողորմութիւնը չի հասնէր ինչ պիտի
ընէիր:

— Պահ, ոտական մը կը կանչէի:

— Արդեօք ինչո՞ւ կրկնամուսնութիւնը
ներքի չէ, քանի որ միտքն ու սիրտը ա-
զատ է կ'ըսէր, գեղանի տիկին մը:

— Ահա այդ պատճառաւ ներքի չէ
ըսաւ խօսակից պարոնը, որովհետեւ երբ
կնոջ մը միտքն ու սիրտը ազատ է, ալ
կարելի չէ անոր տեւական ամուսին մը
հաւնեցնել:

Սիրահարի մը հրաժեշտ:

— Ոհ, արտէմ, շարաթէ մը դուք Սա-
րընար պիտի երթաք, իսկ մենք հոս
պիտի մնանք. իրարմէ չկատուած ըսէ
ինձ, արդեօք զիս պիտի յիշե՞ս:

— Անտարակո՞յս... պատասխանեց ե-
ռանգոտ ձայնով մը. չա՞րքը կատունիս
քանի գիրկս առնեմ, հաւասար եղիր
որ դքեղ միտքս պիտի բերեմ:

— Մայրիկ, հայրս մեռած ատենը ա-
մենեւին բան մը չի թողո՞ւց...


— Ինչպէս չէ զաւակս, զքեզ եւ զիս,
երեք հարիւր զարուշ ալ նպարտվածաւրին
պարտք թողուց:

3 · Մ · ՀԱՅԵԱՆ



LESSIVE MAGIQUE

ԼԷՍԻՎ ՄԱԺԻԲ



ԼԷՍԻՎ ՎԷՆՒՍ

ԱՌԱՆՑ ԿՐԱԿԻ ԵՒ ԱՌԱՆՑ ԱՃԱՌԻ ՃԵՐՄԱԿԵՂԻՆԱՅ ԼՈՒՍՅՈՒՄ

Դիւրութիւն — Մաքրութիւն — Խնայողութիւն

Դաղդիայ Կառավարութեան հաստատութեամբ արտօնագրեալ արժանք եւ ոսկի միտակներու արժանացած

Սոյն հրաշալի նոր գիւտով, ազատեցէք այլ եւս յայտնութիւններէ, աւելորդ ծախքերէ ու ժամանակի կորուստներէ և մանաւանդ ճերմակեղէնները մաշեցնող և ձեռքերու ալ վնասող անպատեհութիւններէ:

Ճերմակեղէններ, բրդեղէններ, սեղանի ու խոհանոցի անօթներ եւ այլն լուալու ու մաքրելու համար, ամենէն ընտիր միջոցն է այս գիւտը, որ մեծ առաւելութիւն մ'ալ ունի հականերխիչ ըլլալով:

Փորձեցէք, բազմատեցէք, միշտ պիտի գործածէք:

Լէսիվ անունով մինչեւ հիմա տեսնուած ապրանքներէն զանազանելու համար պէտք է պահանջել բաքէթներու վրայ վերեւ դրուած ՄՍԺԻԲԻ և ՎԷՆՍԻ մարքաները, խարդախութիւն ընողը օրէնքով կը պատժուի:

Կը ծախուի մէկ գնով Պօլսոյ բոլոր արուարձաններու մէջ:

Կեդրոնատեղիներն են՝ Ղալաթիա Մումհանէ Րիֆաթ խան, թիւ 19, 20 և Պոլիս Թընտըգլեան խան, թիւ 3, 1. Սըսլանեան և Ս. Էմիրզէ վաճառատունն:

Դաւառաց համար գործակալութիւն կը տրուի, փափաքողները պէտք է դիմեն ընդհանուր Թուրքիոյ, Եգիպտոսի, Պուլկարիոյ, Ռումանիոյ և Սերպիոյ գործակալին, հետեւեալ հասցէով

Պ. Սեֆերեան, Մումհանէ, Իիֆաթ խան, թիւ 19, 20

կ. Պոլիս, Ղալաթիա

Հանրապետական կրթության նախարարի ամեն շաբաթ օր կանոնադրապես.
կը պարունակէ Գրական, Դիտական, Երկրագործական, Տնտեսական,
Արհեստական եւայլն, եւայլն. շահեկան նիւթեր:

Երկրագործական, Արհեստական ու Իրաւաբանական հարցումներու միշտ
պատասխանները կը արուին մասնագէտներու ձեռքով:

Բաժանորդագրութիւնք և թղթակցութիւնք ուղղելի են առ Տնօրի-
նութիւն Հանրապետական լրագրի:

Կ. Պոլիս, Զարդարեան Գրատուն, Զագմագմըլար-Եօգուշու քիւ 50

درعيله ده چماقيلرده ۵۰ نومرولى زارطاريان كتبخانه سنده (حازا قيدا ق) مجموعہ علوم غزته سى
اداره سده

Հանրապետական պատրաստ է ընդունիլ ամեն տեսակ ծանուցումներ, ազգա-
րարութիւններ, խիստ դիւրամատչելի պայմաններով. Հրատարակիչներէ կը
խնդրուի իրենց երկերէն ղրկել իրկու օրինակ, զորս պիտի ազգարարենք
հասարակութեան, կարեւորներուն վրայ ընելով մեր քննադատումը:

ԳՈՐԾԱԿԱԼԲ ՀԱՆՐԱԳԻՏՍԿԻ

ԱՅԹԱՊ. — Դարեգին էֆ. Պողարեան
ԱՏԱ-ԲԱԶԱՐ — Ստեփան էֆ. Սափրիչեան
ԱՏԱՆԱ. — Միսաք էֆ. Գաղաղեան:
ԱՐԱԲԿԻՐ — Յ. Պ. էֆ. Մանուէլեան.
ԱԹԷՆՔ. — Մկրտիչ էֆ. Մանուկեան
ԳՈՒՐՏ ՊԵԼԷՆ — Արժ. Տ. Ստեփան քա-
հանայ Մկրեան.
ԳԱՀԻՐԷ. — Մ. Պաղտասար էֆ. Ս. Նտ-
թանեան.
ԷՐԶՐՈՒՄ — Տեարք Ինճիճեան Նղբարք.
ԹՕԳԱՏ — Յովհաննէս էֆ. Գաղանճեան.
ԻԶՄԻՐ — Կարապետ էֆ. Մալէճեանեան.
ՄԱԼԿԱՐԱ — Վ. Մանուկ էֆ. Զօլաքեան.
ԽԱՐԲԵՐԴ — Խաչիկ էֆ. Քէօսէեան:

ԿԵՍԱՐԻԱՅ — Գեր. Տրդատ Խ. Վ. Պալեան
ՄԱՐԱՏ — Արժ. Տ. Յովհաննէս քհնյ.
Վարժապետեան.
ՄԱՐԶՈՒԱՆ — Յովհաննէս էֆ. Յակոբեան.
ՄՈՒՏ — Գեղամ էֆ. Տ. Կարապետեան.
ՆԻԿՈՄԻԿԻԱ — Յակոբ էֆ. Սուքիասեան.
ՈՒՐՅԱ — Գէորգ էֆ. Ոսկերիչեան.
ՊԱՆՏԸՐՄԱ — Արմենակ էֆ. Ս. Մսրբեան.
ՊԱՐՏԻՋԱԿ — Վահան էֆ. Ճիւղեան.
ՊՐՈՒՍԱ — Օննիկ էֆ. Լուծֆեան.
ՌՊՏՈՍԹՕ — Յովհաննէս էֆ. Տէմիրեան.
ՍԱՄՍՕՆ — Կարապետ էֆ. Սէֆէրեան.
ՍԸՎԱՋ — Յ. էֆ. Գարակէօզեան.
ՏՐԱՊԶՈՆ — Սահակ էֆ. Էթմէքեան:

ԳՐԱՏՈՒՆ ԶԱՐԴԱՐԵԱՆ

Գիրք գնել կ'ուզէ՞ք, դիմեցէ՞ք Զարդարեան Գրատունը. հոն միշտ պիտի
գտնէք ամեն ուղածնիդ եւ միշտ զեղչով: